Վ. Վարդանյան

ԳՎԱՐԴԻԱՅԻ ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ ՍԵՐԳԵՅ ԻՍԱՅԵՎԻՉ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

☆

9(47).1941-1945" 29826.
Ч-30 Чистяков, Ч.Ф.
Чистяков Федор Федорович. Тыл р
Чистяков: 80т

ԱՐԱՐԱՏԻՆ

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ИСТОРИИ

№	МАТЕРИАЛЫ ПО ИСТОРИИ ВЕЛИКОЙ ОТЕЧЕСТВЕННОЙ ВОЙНЫ	7

В. Г. ВАРТАНЯН

ГВАРДИИ ГЕНЕРАЛ-МАЙОР СЕРГЕЙ ИСАЕВИЧ КАРАПЕТЯН

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1956

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

№	ՆՅՈՒԹԵՐ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ	7

ՍՏՈՒԳՎԱԾ Է 1961 թ.

9(47) 27
Վ-30

Վ. Գ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԳՎԱՐԴԻԱՅԻ ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ ՍԵՐԳԵՅ ԻՍԱՅԵՎԻՉ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

A II 39789
29826

ՀՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ՏՊՐ. ՊՐՍԵՆՏԱԼ
ԳՐԱԴԱՐԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԱ. ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1956

Տպագրվում է Հայկական ՍՍՌ Գիտությունների
ակադեմիայի խմբագրական-հրատարակչական
խորհրդի որոշմամբ:

ՆԵՐԱԾԱԿԱՆ

Կոմունիստական պարտիայի և նրա հանճարեղ առաջնորդ մեծ Լենինի ստեղծած Սովետական Բանակը և Ռազմա-Ծովային Նավատորմը իրենց գոյության առաջին իսկ օրերից հավատարմորեն են կատարում Մեծ Հոկտեմբերի պատմական նվաճումների, Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկաների Միության սլետական շահերի պաշտպանների իրենց սրբազան պարտքը։ Նրանք աչալուրջ կերպով կանգնած են կոմունիզմ կառուցող մեր բազմազգ ժողովրդի ստեղծարար աշխատանքի պահակագիրքում և միշտ զգաստ ու պատրաստ են խորտակիչ հարված հասցնելու ամեն մի ագրեսորի, որը կհամարձակվի խախտել Սոցիալիստական մեր հզոր Հայրենիքի խաղաղ կյանքը։ ՍՍՌ Միության Զինված Ուժերը, նրա զինվորներն ու նավաստիները, սերժանտներն ու ավագները, սպաները, գեներալներն ու ադմիրալները կոփվել ու առնացել են մեր հզոր Հայրենիքի աղատության ու անկախության համար մղված բազմաթիվ հերոսամարտերում։

Սովետական Միության Զինված Ուժերի ամբողջ պատմությունը, նրա կուռ շարքերում աճած ու դաստիարակված ռազմիկների կյանքն ու մարտական գործունեությունը հանդիսանում են հերոսության, Հայրենիքին անձնուրացաբար ծառայելու և իրենց զորային վսեմ պարտքը արժանապատվությամբ կատարելու վառ օրինակ։

Բազում մարտերում կոփված Սովետական Բանակի անկոտրում ուժը, նրա քաջարի ռազմիկների բարոյա-քաղաքական և մարտական անզուգական հատկությունները ավելի վառ ու ցայտուն կերպով դրսևորվեցին 1941—1945 թվականների Հայրենական Մեծ պատերազմում։ Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ ՍՍՌ Միության Զինված Ուժերը համաշխարհային-պատմական նշանակություն ունեցող հաղթանակ նվաճեցին մինչև ատամները զինված գերմանական ֆաշիզմի և յապոնական իմպերիալիզմի դեմ։ Այդ ահեղ պատերազմում մեր Զինված Ուժերը պաշտպանեցին ոչ միայն Սովետական Հայրենիքի պատիվը, ազատությունն ու անկախությունը, այլև Եվրոպայի ժողովուրդներին փրկեցին ֆաշիստական ստրկացնողներից, իսկ Արևելյան Ասիայի ժողովուրդներին՝ յապոնական զավթիչների լծից։

Հայրենական Մեծ պատերազմը նոր ուժով հաստատեց, որ մեր բանակը նոր տիպի բանակ է, որ նա իրոք ժողովրդական բանակ է, մեր երկրի ազգերի միջև եղբայրության բանակ է, ինտերնացիոնալիզմի ոգով դաստիարակված բանակ։

Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին ռուս մեծ ժողովրդի և մեր լայնածավալ երկրի մյուս ժողովուրդների ծոցից դուրս եկած ռազմիկների հետ կողք կողքի, ուս-ուսի տված հերոսաբար էին մարտնչում նաև Հայաստանի զավակները՝ հայ զինվորները, սպաները ու գեներալները։ Սրբությամբ կատարելով իրենց հայրենասիրական պարտքը, Սովետական Բանակի ռազմիկները, իսկ նրանց թվում նաև հայ ռազմիկները, արիաբար էին մարտնչում ուժեղ կերպով զինված նենգ ու ոխերիմ թշնամու դեմ։ Իրենց փառապանծ հրամանատարների ղեկավարությամբ, նրանք ջախջախիչ հար-

վածներ էին հասցնում թշնամուն, չխնայելով իրենց արյունը և բուն իսկ կյանքը։

Հայրենական Մեծ պատերազմի սկզբից մինչև նրա հաղթական ավարտը գործող բանակի շարքերումն էր նաև հայ ժողովրդի հավատարիմ զավակ՝ դվարդիայի գեներալ-մայոր Սերգեյ Իսահիչ Կարապետյանը։ Մշտապես գտնվելով դիվիզիայի հրամանատարի պաշտոնում, նա հաջողությամբ էր կատարում վերադաս հրամանատարությունից ստացած մարտական ամեն մի առաջադրանք։ Բացի ռազմաճակատների մի շարք հատվածներում կատարած հաջող օպերացիաներից, նրա միավորման գնդերը ակտիվորեն մասնակցել և աչքի են ընկել Նևելի, Օստրովի, Տարտուի (Դորպատ), Ռիգայի ազատագրման մարտերում և Բեռլինի վրա կատարված պատմական դրոհում։ Հենց այդ օպերացիաների մասին է, որ մենք ցանկանում ենք պատմել այս գրքում։

* * *

Սերգեյ Իսահիչ Կարապետյանը ծնվել է 1899 թվականի նոյեմբերի 25-ին, արհեստավորի ընտանիքում։ Նրա հայրը անգրագետ, բայց շատ աշխատասեր մարդ է եղել։ Իր բազմանդամ ընտանիքը պահելու համար Իսայի Կարապետյանը թողնում է հարազատ Զանգեզուրը և մեկնում է Բաքու, այնտեղից Կրասնովոդսկ, Կզիլ-Արվաթ, Աշխաբադ, Կոկանդ։ Նա թափառում է՝ քաղաքից-քաղաք, գյուղից-գյուղ, մեծ դժվարություններ է քաշում օրվա պարենն վաստակելու նպատակով։

Սերգեյի մայրը՝ Հերիքնազը նույնպես անգրագետ մի գեղջկուհի էր։

Չնայած իրենց շարքաշ կյանքին, Սերգեյի ծնողները ոչ մի ջանք չէին խնայում, որպեսզի իրենց զավակը ուսում ստանա և, ինչպես ժողովուրդն է ասում, մարդ դառնա։

Սերգեյին կրթություն տալու խնդրով էր մտահոգված նաև նրա ավագ եղբայր Կարապետը, որը գտնվում էր Մոսկվայում։

1913 թվականին, 14 տարին հազիվ բոլորած Սերգոն փոխադրվում է Մոսկվա և այստեղ, իր եղբոր օգնությամբ, մտնում է գիմնազիա։ Ուսման հենց առաջին ամիսներից Սերգոն աչքի է ընկնում որպես ընդունակ և ջանասեր աշակերտ։ Չնայած նյութական ծանր պայմաններին, նա գերազանց թվանշաններով է փոխադրվում դասարանից-դասարան։

Սակայն ուսումը անավարտ է մնում։

Մեծ Հոկտեմբերի ծնունդ երիտասարդ Սովետական պետությունը խեղդելու նպատակով, Ռուսաստանի հակահեղափոխական ուժերը ԱՄՆ-ի, Անգլիայի, Ֆրանսիայի, Յապոնիայի և իմպերիալիստական մյուս երկրների աջակցությամբ, 1918 թվականին քաղաքացիական պատերազմ ծավալեցին։ Կոմունիստական պարտիան և Սովետական կառավարությունը բոլոր աշխատավորներին կոչ արեցին ազատագրական պայքարի ելնել ընդդեմ օտարերկրյա զավթիչների։ Պարտիայի կոչով և նրա ղեկավարությամբ, մեր երկրի բոլոր ժողովուրդները սրբազան Հայրենական պատերազմի ելան, իրենց հարազատ սովետական կարգերի պաշտպանության համար։

Արձագանքելով պարտիայի և կառավարության մարտական կոչին, հարյուր հազարավոր բանվորների ու գյուղացիների հետ միասին, Սերգեյ Կարապետյանը մտնում է նոր կազմակերպվող Կարմիր Բանակի շարքերը և ռազմաճակատ է մեկնում։ Առաջին զորամասը, ուր նրան բախտ է վիճակվում ծառայելու, դա 44-րդ բանվորական պահեստային գունդն էր։

Մարտական մկրտությունը Կարապետյանը ստանում է Արևելյան ռազմաճակատում՝ Պավլովսկայա կոչ-

վող երկաթուղային կայարանի շրջանում։ Այդ ժամանակ նա հետախուզիչ դասակի հրամանատարի օգնական էր։

— Մեզ առաջադրանք էր տրված,— պատմում է Սերգեյ Իսահիչը,— ինչ գնով էլ լինի տեղեկություններ ձեռք բերել այն մասին, թե սպիտակգվարդիականները ինչպիսի ուժեր են կուտակել Պավլովսկայա կայարանում և նրա շրջակայքում գտնվող գյուղերում։ Մենք գիտեինք, որ այդտեղ կենտրոնացված էին թշնամու բանակին պատկանող Դուտովի զորամասերը, բայց նրանց քանակը մեզ հայտնի չէր։ Առաջադրանքը դժվարին էր։ Ռազմաճակատի որոշ գիծ գոյություն չուներ։ Եվ դրա հետևանքով շատ հեշտ էր շրջապատման մեջ ընկնել։ Մենք բաժանվեցինք երկու խմբի, որոնցից մեկի պլուխն անցավ ինքը՝ մեր դասակի հրամանատար Մյասոեդովը, իսկ մյուս խումբը հանձնարարեց ինձ։ «Տե՛ս, լեռան ճուտ,— ասաց նա.— քեզ ոլի՛նդ պահիր։ Մեր առջև բարդ խնդիր է դրված, բայց մենք պետք է կատարենք այն»։ Ես հավաստիացրի նրան, որ ամեն ինչ կարգին կլինի, ու մենք գործի անցանք։

Դեռ գյուղ չհասած, թշնամին մեզ վրա հրացանադնդացրային կրակ բացեց։ Բանի գնում ավելի ուժեղանում էր այդ կրակը։ Սակայն մենք շարունակում էինք առաջ շարժվել։ Փամփուշտների սակավության պատճառով սկզբում չէինք պատասխանում հակառակորդի կրակին։ Բայց հետո, երբ արդեն բավական մոտեցանք գյուղին, մենք ևս սկսեցինք կրակել։ Սկսվեց ուժեղ փոխհրաձգություն։ Մեղանից մի քանիսը վիրավորվեցին։ Բայց, չնայած դրան, մենք շարունակում էինք առաջ ընթանալ։ Գյուղը չհաջողվեց գրավել։ Սակայն թշնամու ուժի և քանակի մասին տեղեկացանք գերի վերցված սպիտակգվարդիականներից։

Երբ վերադարձանք, դասակի հրամանատարը ուժեղ սեղմեց ձեռքս ու ասաց. «Կեցցե՛ս, սեռուկ, հույսերս արդարացրիր։ Քեզանից քաջ զինվոր դուրս կգա»։ Դասակի հրամանատարի այդ խոսքերը ուժեղ ազդեցություն թողեցին ինձ վրա։ Նրանք թեավորեցին ինձ և իմ մեջ ավելի մեծ սեր ու եռանդ առաջացրին դեպի ռազմական գործը։

1919 թվականին Ս. Ի. Կարապետյանը նշանակվում է էսկադրոնի հրամանատարի տեղակալ և մասնակցում Ակտյուբինսկ քաղաքի շրջանում մղված մարտերին։ Հետագայում նշանակվում է էսկադրոնի հրամանատար ու այդ պաշտոնում էլ մնում է մինչև 1920 թվականի սկիզբը։

1920 թվականի սկզբներին Սերգեյ Իսահիչին ուղարկում են Բորիսոգլեբսկ «Սովետական հեծելազոր» հրամանատարական դասընթացներում սովորելու։

1921 թվականի վերջերին, հաջողությամբ ավարտելով այդ դասընթացները, Կարապետյանը գործուղվում է Երևան։ Այստեղ նա ծառայության է անցնում հայկական հեծելազորային գնդում, որպես դասակի հրամանատար։

Սովետական Հայաստան դալուց անմիջապես հետո Կարապետյանը ձեռնամուխ է լինում իր հրամանատարության տակ գտնվող ռազմիկների դաստիարակության գործին։ Կատարելագործելով նրանց ռազմական գիտելիքները, նա ենթականերին դաստիարակում է Հայրենիքին, Կոմունիստական պարտիային անձնվիրության, սովետական ջերմ հայրենասիրության ոգով։

Զորային այս միավորումում Կարապետյանը ծանոթանում է այն ժամանակ էսկադրոնի հրամանատար, այժմ Սովետական Միության Մարշալ Իվան Խրիստաֆորովիչ Բագրամյանի հետ։ Նրանց միջև ստեղծվում են ընկերական մտերիմ հարաբերություններ, որոնք հետա-

գայում վերածվում են ջերմ ու սրտագին բարեկամությանն։

Շուտով դասակի հրամանատար Կարապետյանը դառնում է էսկադրոնի հրամանատարի օգնական, իսկ որոշ ժամանակ անց՝ էսկադրոնի հրամանատար։

1925 թվականի աշնանը Սերգեյ Իսաևիչը գործուղվում է Լենինգրադ՝ ռազմական դասընթացներում սովորելու։ Նույն այդ դասընթացներն է գործուղվում նաև Իվան Խրիստաֆորովիչ Բաղրամյանը։ Նրանք սովորում են միասին, միայն տարբեր բաժիններում։ Սերգեյ Իսաևիչը ուսանում է էսկադրոնների հրամանատարների բաժնում, իսկ Ի. Խ. Բաղրամյանը՝ գնդի հրամանատարների բաժնում։ Այստեղ նրանք է՛լ ավելի են մոտիկանում։ Սովորելով ռազմական գործը, միաժամանակ նրանք ավելի հանգամանորեն ուսումնասիրում են Կոմունիստական պարտիայի պատմությունը, տիրապետում մարքսիզմ-լենինիզմի թեորիային։

Դասընթացներն ավարտելուց հետո նրանք երկուսն էլ Երևան են վերադառնում։ Ի. Խ. Բաղրամյանը նորից անցնում է գնդի հրամանատարի պաշտոնին, իսկ Կարապետյանը՝ էսկադրոնի։ Սակայն դեպի ուսումը եղած սերն ու ձգտումը հանգիստ չի տալիս ոչ մեկին և ոչ էլ մյուսին։ Միաժամանակ անցնելուց հետո նրանք որոշում են ինչ գնով էլ լինի, մտնել Ռազմական ակադեմիա, իրենց գիտելիքներն ավելի խորացնելու նպատակով։

1931 թվականին, Ի. Խ. Բաղրամյանը և Ս. Ի. Կարապետյանը հաջողությամբ հանձնում են քննությունները և ընդունվում Մ. Վ. Ֆրունզեի անվան Ռազմական ակադեմիան։

Ակադեմիան ավարտելուց հետո, 1934 թվականին Ս. Ի. Կարապետյանն աշխատանքի է նշանակվում Մերձ-

վոլգյան զինվորական օկրուգում, իսկ 1935 թվականի սկզբներին գործուղվում է Անդրկովկասյան զինվորական օկրուգ։ Այստեղ նա նշանակվում է օկրուգի հրամանատարի տեղակալ՝ թիկունքի գծով։ Նույն թվականի մայիսին Կարապետյանը դարձյալ վերադառնում է Սովետական Հայաստան և ընդունում հայկական 22-րդ հեծելազորային գնդի հրամանատարությունը։

Այդ պաշտոնում Կարապետյանը մնում է մինչև 1938 թվականը։

1938 թվականին մայոր Կարապետյանը ուղարկվում է Բելոռուսական զինվորական օկրուգ, որտեղ նշանակվում է հեծելազորային գնդի հրամանատար։

Ծանոթանալով գնդի պատմության հետ, իմանալով այն մասին, որ գունդը Սովետական Հայրենիքի աղատության ու անկախության համար մղված բազմաթիվ մարտերում անցել է փառավոր ուղի և քաջագործության անթառամ պսակով է զարդարել իր մարտական դրոշը, Կարապետյանը իր առաջ նպատակ է դնում արբությամբ պահպանել ու բազմապատկել պանծալի գնդի մարտական տրադիցիաները։

Իր աշխատանքը նոր պաշտոնում, ինչպես և միշտ, նա սկսում է անձնակազմի ուսումնասիրությունից։ Մշտապես գտնվում է ռազմիկների շրջանում, մոտիկից ծանոթանում նրանց կյանքի ու պահանջմունքների հետ։ Հրամանատարներից պահանջում է լայնորեն օգտագործել ռազմիկների անհատական ուսուցման մեթոդը։ Մայոր Կարապետյանի հրամանատարության տակ գտնվող գունդը շուտով աչքի է ընկնում իր մարտական ու քաղաքական· պատրաստության բարձր ցուցանիշներով և գովասանքի արժանանում միավորման հրամանատարի կողմից։

1938 թվականին, աշնանային տեսչական ստուգում-

ների ժամանակ նրա դունդը, որպես լավագույնը, ներկայացվում է Բելոռուսական զինվորական օկրուգի զորքերի հրամանատարի ստուգմանը։

* * *

1939 թվականի սեպտեմբերի 1-ին ֆաշիստական Գերմանիան հարձակվեց Լեհաստանի վրա։ Գերմանական ֆաշիստները նպատակ էին դրել զավթել ամբողջ Եվրոպան, ստրկացնել ժողովուրդներին։ Չկարողանալով ընդդիմադրել հիտլերականների ներխուժմանը, լեհական այն ժամանակվա կառավարությունը և նրա բանակի հրամանատարությունը դեռևս սեպտեմբերի կեսերին լքեցին երկիրը և դիմակորույս արտասահման փախան։ Հիտլերյան հրոսակախմբերը անզուսպ շարժվում էին դեպի Արևմտյան Ուկրաինայի և Արևմտյան Բելոռուսիայի շրջանները, որպեսզի զավթեն նաև դրանք, ստրկացնեն այդտեղ բնակվող ժողովուրդներին և ավելի ընդհուպ մոտենան Սովետական երկրի պետական սահմաններին, սպառնան մեր Հայրենիքի անվտանգությանը։

Նկնելով մեր երկրի պետական շահերից և Արևմտյան Ուկրաինայի ուկրաինացիների ու Արևմտյան Բելոռուսիայի բելոռուսների շահերից, Սովետական կառավարությունը չէր կարող թույլ տալ, որպեսզի հիտլերականները անարգել առաջ շարժվեն դեպի մեր սահմանները։ 1939 թվականի սեպտեմբերի 17-ին մեր զորքերին հրաման տրվեց՝ անցնել սովետա-լեհական սահմանը և եղբայրական օգնության ձեռք մեկնել Արևմտյան Բելոռուսիայի ու Արևմտյան Ուկրաինայի բնակչությանը։

ՍՍՌ Միության Զինված Ուժերի ռազմիկները պատվով կատարեցին պետության առաջադրանքը։ Աղատա-

բար զորագնդերի մարտական շարքերումն էր գտնվում նաև մայոր Կարապետյանի գունդը։

Օրական մոտ 100 կիլոմետր հանապարհ անցնելով, արիաբար տոկալով զորային կյանքի դժվարությունները, այդ գնդի ռազմիկները, մյուս զորամասերի հետ միասին, հաղթական երթով առաջ էին շարժվում։

Երբ սովետական զորագնդերը հասան Բուգ գետին, նրա վրայով անցնող բոլոր կամուրջներն արդեն պայթեցված էին։ Կարապետյանը, առանց երկար տատանումների, որոշում է ընդունում լողալով անցնել գետը։ Այդ որոշումն անմիջապես ի կատար է ածվում։ Գնդի անձնակազմը լրիվ հանդերձանքով սկսում է գետանցը։

— Թե՛ հրամանատարները և թե՛ զինվորները,— պատմում է Կարապետյանը,— այդ պատասխանատու պահին այնքան կազմակերպված ու հստակ էին գործում, որ գունդը մարդկային ոչ մի զոհ և ոչ էլ տեխնիկայի կորուստ չունեցավ։ Այն ժամանակ, երբ մյուս զորամասերը սպասում էին պոնտոնային գետանցների պատրաստմանը, մեր ռազմիկները արդեն անցել էին Բուգի հարավ-արևմտյան ափը։

Մարտական առաջադրանքը հաջող կատարելու համար Կարապետյանը պարգևատրվում է Կարմիր Դրոշի շքանշանով։

1940 թվականի սկզբներին Ս. Ի. Կարապետյանին շնորհվեց գնդապետի կոչում։ Նա նշանակվեց մոտո-մեխանիզացված գնդի հրամանատար։ Այդ պաշտոնում նա մնաց մինչև 1941 թվականի հունիսի 19-ը։ Հունիսի 19-ին, Հայրենական Մեծ պատերազմը սկսվելուց երկու օր առաջ, Սերգեյ Իսաևիչը նոր նշանակում է ստանում։ Նրան ուղարկում են Սովետական Լատվիա, որտեղ նա ստանձնում է լատիշական դիվիզիայի հրամանատարի տեղակալի պաշտոնը։

* *
*

1941 թվականի հունիսի 22-ին ֆաշիստական Գերմանիան ուխտադրուժ կերպով, առանց պատերազմ հայտարարելու հարձակվեց մեր երկրի վրա։ ՍՍՌՄ-ում սոցիալիստական խաղաղ շինարարությունն ընդհատվեց։ Սկսվեց ժողովրդի Հայրենական Մեծ պատերազմը հիտլերյան զավթիչների ու նրա գործակիցների դեմ։

Կոմունիստական պարտիան և Սովետական կառավարությունը նենդ թշնամուն հակահարված տալու և նրան լիովին ջախջախելու համար ձեռնարկեցին անհրաժեշտ միջոցառումներ։ Անմիջապես ռազմական ձևով վերակառուցվեց մեր երկրի ժողովրդական տնտեսությունը։ Ռազմաճակատի կարիքներն ու պահանջները բավարարելու համար ՍՍՌՄ ամբողջ արդյունաբերությունը կարճ ժամանակամիջոցում անցավ ռազմական արտադրանքի թողարկմանը։

Հայրենական Մեծ պատերազմի այդ դաժան օրերին մեր Հայրենիքի աշխատավորությունն է՛լ ավելի ներտորեն համախմբվեց Կոմունիստական պարտիայի և Սովետական կառավարության շուրջը, ավելի կուռ դարձավ ՍՍՌՄ ժողովուրդների բարեկամությունը, բանվոր դասակարգի և կոլտնտեսային գյուղացիության դաշինքը։

Ամբողջ երկիրը վերածվեց ռազմական անառիկ ամրոցի։ «Ամեն ինչ հաղթանակի համար» բառերը շուրթերին ռազմաճակատ մեկնեցին բանվորներն ու գյուղացիները, գիտության, կուլտուրայի և արվեստի աշխատողները։

Օրավուր բազմապատկվում էին Հայրենիքի անկախության, պատվի և աղատության համար մարտնչելու պատրաստ սովետական հայրենասերների շարքերը։

Ամենուր տեղի էին ունենում բազմամարդ միտինգ-

ներ։ «Մեր գործն արդար է։ Թշնամին կջախջախվի։ Հաղթանակը մերը կլինի»,— այս խորհրդաստ բառերով էին վերջացնում իրենց ելույթները սովետական մարդիկ գործարաններում և ֆաբրիկաներում, սովխոզներում և կոլտնտեսություններում, հիմնարկներում և Սովետական Բանակի զորամասերում տեղի ունեցող ժողովներում։

ԱՌԱՋԻՆ ԳՈՏԵՄԱՐՏԸ

Հունիսի 22-ի լույս 23-ի գիշերը լատիշական դիվիզիան մարտական առաջադրանք է ստանում և վաղ առավոտյան շարժվում է դեպի Օստրով քաղաքը։

Թշնամու օդային հարվածներից խուսափելու համար դիվիզիան մարտական երթը կատարում է գիշերով։ Հունիսի 25-ին, առավոտյան ժամը 4-ին, երբ միավորումը մոտենում էր № բնակավայրին, նպատակ ունենալով գիշերային ծանր երթից հետո այնտեղ հանգստանալ, բոլորովին անսպասելիորեն ընկնում է թշնամու ուժեղ կրակի տակ։

Դիվիզիայի հրամանատար գնդապետ Տուպիկովը հրամայում է բացազատել գնդերը և ընդունել հանդիպական գոտեմարտը։ Անհրաժեշտ էր դրավել այն բնակավայրը, ուր բուն էին դրել գերմանական զորքերը։ Վաղ առավոտից մինչև ուշ երեկո տևեց այդ ծանր ու արյունալից կռիվը։ Սովետական զորագնդերը մեծ կորուստներ պատճառեցին գերմանացիներին։

Մարտի ընթացքում դիվիզիայի հրամանատարը որոշում ընդունեց շրջանցել թշնամուն, դուրս գալ նրա թիկունքը և թիկունքից գրոհել նրա վրա։ Կարապետյանին հանձնարարվեց հետախուզել շրջանցման ուղին ու այդ ուղիով տանել երկու գունդ։ Ինքը դիվիզիայի հրամանատարը, պետք է գործեր ճակատից դեպի իր կողմը քաշելով հակառակորդի գլխավոր ուժերը։

Սկսվեց դոտեմարտի վճռական փուլը։ Կարապետյանի գլխավորությամբ ստորաբաժանումները ծառախիտ խճուղիներով շտապում էին դեպի Թշնամու թիկունքը։

Այդ կուսական անտառներով առաջանալը, անսխալ կողմնորոշվելը, դնդերը ճիշտ ուղիով տանելը հեշտ խնդիր չէր։ Այդտեղ յուրաքանչյուր թիզուտ մահ էր սպառնում։ Սակայն առջևում ունենալով համարձակ մարտիկներից կազմված մի հետախուզիչ վաշտ, որն այդ երկարաձիգ զորասյան համար աչք ու ականջ էր հանդիսանում, գնդապետ Կարապետյանը համարձակորեն առաջ էր տանում զորասյունը։ Միաժամանակ նա անընդմեջ կապ էր պահպանում դիվիզիայի հրամանատարի հետ և զեկուցում իր գործողությունների մասին։

Բայց ահա կապը կտրվեց։

— Վեներա... Վեներա... Ես Յուպիտերն եմ... Ես Յուպիտերն եմ... Անցնում եմ ընդունման... Անցնում եմ ընդունման...

Խիտ անտառներից Թշնամու գլխի վրայով դեպի դիվիզիայի հրամանատարը տարածվող ռադիոալիքների այս աղղականչերը մնացին անպատասխան։ Դիվիզիայի հրամանատարի շտաբային մեքենան ընկել էր Թշնամու ականանետային կրակի տակ։ Ականի ուղղակի հարվածով սպանվել էր գնդապետ Տուպիկովը։ Գնդապետին ուղեկցող մարդկանցից միայն մեկ սպա հրաշքով կենդանի էր մնացել, որը և պատմել էր պատահածի մանրամասնությունները։

Կարապետյանը, առանց երկար մտածելու, իր վրա է վերցնում դիվիզիայի հրամանատարությունը։ Կապը գնդերի միջև վերականգնվում է և դիվիզիան շարունակում է մարտը։

Ջախջախելով Թշնամու դիմադրությունը, դիվիզիան դուրս է գալիս Պսկով քաղաքի շրջանը և այստեղ միայն

370—2

39782
29826

կարողանում է կապվել վերադաս հրամանատարության հետ։ Կարապետյանն անմիջապես մեկնում է ռազմաճակատի շտաբը։ Անձամբ լինում է ռազմաճակատի հրամանատար Սովետական Միության Մարշալ Ն. Ֆ. Վատուտինի մոտ և հրաման է ստանում շարժվել դեպի Դոն քաղաքը՝ գեներալ-լեյտենանտ Մորոզովի միավորման զորքերին միանալու նպատակով։

Ծավալվում են կատաղի մարտեր Լենինգրադի պաշտպանության համար։ Կարապետյանի դիվիզիան առաջադրանք է ստանում անցնել Շենոլ գետը, դուրս գալ թշնամու թիկունքը և գերմանացիներին հարվածել թիկունքից։

Չնայած դժվարին պայմաններին, դիվիզիան մարտական հրամանը կատարում է հաջողությամբ։ Դուրս գալով թշնամու հարձակվող զորքերի թիկունքը և անսպասելի հարված հասցնելով նրան, սովետական ռազմիկները խոշոր կորուստներ են պատճառում գերմանացիներին։ Այդ դոտեմարտում դիվիզիան թշնամուց խլում է ավելի քան 200 ավտոմեքենա, 320 հրացան, 37 թնդանոթ և ուրիշ ռազմաավար։

Հաջող կերպով կատարելով մարտական առաջադրանքը, դիվիզիան հրաման է ստանում անցնել Ստարայա-Ռուսսա քաղաքի պաշտպանությանը։

* * *

Գերմանացիներն առաջ էին շարժվում դեպի Լենինգրադ։

Սովետական զորքերը որպես պատնեշ կանգնեցին Ստարայա-Ռուսսայի մատույցներում և, համառորեն պաշտպանելով քաղաքը, կործանիչ հարվածներ էին հասցնում թշնամուն։

Ստարայա-Ռուսսայի համար մղված համառ մարտերում ռումբի բեկորով Կարապետյանը վիրավորվում է։

Վերքը բուժելու համար նրան փոխադրում են բժշկա-սանիտարական դումարտակ, իսկ այնտեղից էլ մոտակա զինվորական գոսպիտալը։

Դա տեղի ունեցավ 1941 թվականի հոկտեմբերին՝ մեր Հայրենիքի համար ամենածանր ու դաժան օրերին։ Այն ժամանակ, երբ գերմանական զորքերը շարժվում էին դեպի Մոսկվա։

Կարապետյանի համար հեշտ չէր այդ տագնապալից օրերին թողնել ռազմի դաշտը։ Մեծ դժվարությամբ նա բաժանվեց լատիշական դիվիզիայից, որտեղ բոլորը ճանաչում և սիրում էին նրան։

Նույն տարվա դեկտեմբերին գնդապետ Կարապետյանը դեռ լիովին չապաքինված դուրս է գրվում գոսպիտալից և գործուղվում Ուֆա՝ Կարմիր Բանակի Գլխավոր շտաբի կարճատև դասընթացներում սովորելու։

Դասընթացներում հաղիվ երեք ամիս մնալուց հետո Սերգեյ Իսաևիչը ուղարկվում է Խարկովի մարզի Ստարոբելսկ քաղաքը։ Այստեղ նրա առաջ խնդիր է դրվում կազմավորել մի նոր հրաձգային դիվիզիա և համապատասխանորեն պատրաստել այն գալիք մարտերին մասնակցելու համար։

Դիվիզիայի անձնակազմի մարտական նախապատրաստումը Կարապետյանը սկսում է հենց նրա կազմավորման առաջին օրերից։ Կազմակերպվում են թե՛ ցերեկային և թե՛ գիշերային պարապմունքներ։ Ռազմիկները ջանասիրաբար ձեռնամուխ են լինում ռազմական տեխնիկայի ուսումնասիրմանը։ Մարտական իրադրությանը առավել մոտեցված տակտիկական պարապմունքներում նրանք գործում են հստակ ու համարձակ, ամեն ինչ կատարում են այնպես, ինչպես իսկական մարտում։

Վարժվում են հրաձգության, խրամատավորման ու քողարկման մեջ, օրը-օրին բարձրացնում իրենց մարտական վարպետությունը, կոփվում ֆիզիկապես։

Ստարոբելսկից դիվիզիան տեղափոխվում է Վորոնեժի մարզի Բորիսոգլեբսկ քաղաքը։ Այստեղ ավարտվում են 174-րդ հրաձգային դիվիզիայի կազմավորման բոլոր աշխատանքները։ Դիվիզիայի մարտական պատրաստականությունը ստուգում է Սովետական Միության Մարշալ ընկեր Կ. Ե. Վորոշիլովը և բարձր գնահատական է տալիս։

ՄԱՐՏԵՐ ԿԱՐԱՏԱՅԱԿԻ ՀԱՄԱՐ

1942 թվականի հունիսին Վորոնեժի ռազմաճակատում գերմանա-ֆաշիստական զորքերին հաջողվեց խցկվել մեր պաշտպանության մեջ և պլացդարմ ստեղծել Դոն գետի ձախ ափին։ Մի գիշերվա ընթացքում հիտլերականներն այստեղ կենտրոնացրին մեծ ուժեր՝ տանկեր, հրետանի և ռազմական այլ տեխնիկա։ Ակամապատեցին գետի իրենց դիրքերը տանող բոլոր խճուղիներն ու ճանապարհները։ Իրենց պաշտպանագծի շուրջը խրամատներ փորեցին։ Ավելի վտանգավոր ուղղություններում նրանք մշտական կրակակետեր ստեղծեցին, գետնի մեջ թաղելով իրենց միջին ու ծանր տանկերը։

Խոշոր նշանակություն տալով այդ բնագծին, թշնամին նպատակադրվել էր հիմնավորապես ամրապնդվել այդտեղ և իր գլխավոր ուժերը կենտրոնացնելուց հետո շարունակել հետագա առաջընթացը դեպի մեր երկրի հարավը։ Նրանք, ինչպես պարզվեց մեր հետախուզական տվյալներից, այստեղ էին կենտրոնացրել Հիտլերի տրամադրության տակ գտնվող 75-րդ կադրային դիվիզիան։

Վորոնեժի ռազմաճակատի հրամանատարությունը որոշում ընդունեց անհապաղ կտրել մեր պաշտպանության մեջ խցկված գերմանական զորքերի ելուստը և թշնամուն շպրտել Դոն գետը։ Այդ դժվարին խնդիրը կատարելու համար Սովետական Բանակի Գլխավոր Հրամանատարությունը կազմակերպեց հետևազորի, հրետանու, տանկերի և ավիացիայի սերտ համագործակցություն։

Սկսվեցին դաժան մարտեր։ Ջախջախիչ հարվածներ հասցնելով թշնամու թևերին, մեր զորամասերը հետզհետե սեղմում էին կիսաշրջանի մեջ առնված ֆաշիստներին։

Վճռական մարտերը սկսվեցին հուլիսի 20-ի լուսաբացին։ Գործելով ռազմաճակատի հատվածներից մեկում, Կարապետյանի դիվիզիայի անձնակազմը սրընթաց գրոհեց գերմանացիների վրա, հիտլերականները փախչելու ելք չունեին։ Նրանք կամ պիտի անձնատուր լինեին, կամ էլ թափվեին Դոն գետը։ Պետք է ասել, որ շատ քիչ գերմանացիների հաջողվեց աղատվել այդ անելանելի դրությունից։ Սովետական ռազմիկները համառորեն գրոհում էին թշնամու դիրքերը։ Գնդերից մեկի հրամանատար՝ փոխգնդապետ Վասիլևը ծանր վերքից արյունաքամ լինելով, շարունակում էր հրամաններ արձակել, ղեկավարել մարտը։ Փոխգնդապետ Վասիլևին զինվորները ուժով դուրս բերին մարտի դաշտից։ Ճիշտ այդպես էր գործում նաև ավագ քաղղեկ Զուվաշովը։ Նա ոչ մի ուշադրություն չէր դարձնում ստացած վերքերին և շարունակում էր մնալ մարտադաշտում, իր անձնական օրինակով ոգեշնչելով դումարտակի անձնակազմին։ Ինչպես և միշտ, իրենց տոկունությամբ ու քաջարիությամբ աչքի էին ընկնում կոմունիստ ու կոմերիտական զինվորները։

Այդ ծանր ու արյունալի դուելմարտն ավարտվեց փայլուն հաղթանակով։ Դիվիզիան ոչնչացրեց մեր պաշտպանության մեջ առաջացած հիտլերականների ելուստը և ազատագրեց Պետրոպավլովսկ բնակավայրը։ Սակայն խնդիրը դրանով չէր լուծվում։ Անհրաժեշտ էր թշնամուց ետ խլել նաև Կարատայակը։

Դիվիզիան առաջադրանք ստացավ մի գումարտակով Դոնն անցնելու ցույց կազմակերպել, որպեսզի իր կողմը գրավի թշնամու ուշադրությունը։ Այդ ժամանակամիջոցում հարևան զորամասերը պետք է թևանցեին հակառակորդին՝ աջ թևից հարվածհասցնելու համար։ Սակայն մարտի ընթացքում իրադրությունը փոխվեց։ Կարապետյանը բանակի հրամանատարությունից թույլտվություն ստացավ իր դիվիզիայով գրավել Կարատայակը ու մարտի մեջ մտցրեց դիվիզիայի ամբողջ անձնակազմը։

Մինչև հարևան զորամասերը գետանցներ պատրաստեցին և սկսեցին փոխադրվել գետի աջ ափը, 174-րդ դիվիզիայի ռազմիկներն արդեն գտնվում էին այնտեղ և, հարվածելով թշնամուն, առաջ էին շարժվում դեպի Կարատայակ։

Ահա թե ինչ է պատմում այդ օպերացիայի մասին Կարապետյանը.

— Կարատայակի ազատագրման օպերացիան հաջող կատարելու համար մենք նախապատրաստվեցինք՝ հաշվի առնելով բոլոր հանգամանքները։ Թշնամու հակադրոհներից պաշտպանվելու նպատակով ռեզերվ առանձնացվեց։ Գնդերի հրամանատարներին մանրամասնորեն ծանոթացրի օպերացիայի պլանի ու վերջնական նպատակի հետ։ Գետն անցնելու համար մենք օգտագործեցինք մեր ձեռքի ու արտամադրության տակ եղած բոլոր միջոցները։ Ոմանք անցան սովորական տախտակների օգնությամբ, ոմանք՝ դերանների, դոնն-

րի, շատերը՝ լվացքի տաշտերի։ Անձնակազմի զգալի մասը գետն անցավ լողալով։

Կարատայակի համար մղված կատաղի մարտերում գերմանացիները մեծ կորուստներ կրեցին։ Գլխովին ջախջախվեցին գերմանական գրավված 75-րդ դիվիզիան, տանկերով հագեցված մեկ էսէսական գունդ և մարտական տեխնիկայով լավ հագեցված ուրիշ շատ ստորաբաժանումներ։

Պարտությունից գազազած ֆաշիստներն անցան հակագրոհների։ Նրանք ցանկանում էին Կարատայակը նոր գրավել, բայց իրենց նպատակին չհասան։

Մոտ երկու ամիս անընդհատ հակառակորդը գրոհում էր սովետական զորքերի վրա։ Նրանք հարյուրավոր տանկեր էին մարտի նետում, ամբակոծում օդից, բայց սովետական քաջասիրտ ռազմիկների մարտական ոգին չէին կարողանում ընկճել։ Մի օր դիվիզիայի պաշտպանական գիրքերի վրա գրոհեց 150-ից ավելի գերմանական տանկ։ Մեր զինվորները չսարսափեցին։ Գործի դնելով հակատանկային պայքարի բոլոր միջոցները, նրանք խփեցին ու հրկիզեցին թշնամու ավելի քան 50 տանկ։ Հիտլերականների անվնաս մնացած տանկերը կրկնակոխ նոր դարձան ու հեռացան մարտադաշտից։ Դա մի անմոռանալի տեսարան էր։ Լայնարձակ հարթավայրի մի փոքր հատվածում կողք-կողքի խարույկների պես բոցկլտում էին ֆաշիստական մեքենաները։

Այդ գոտեմարտում ամենից ավելի աչքի ընկան գնդապետ Դոբշչիկովի, փոխգնդապետ Ռոմանենկոյի զորամասերի անձնակազմերը, ինչպես նաև հայ զինվոր Ասլան Սարիբեկյանը, վրացի Գեորգի Կիրիկաշվիլին, ադրբեջանցի Ալեքպեր Աղաևը և շատ ուրիշ քաջ ռազմիկներ, որոնք համարձակորեն դուրս էին թռչում խրամատներից, սողեսող մոտենում տանկերին

ու նռնակներով, կամ շշերով լիքը դյուրավառ հեղուկով հրկիզում թշնամու մեքենաները։

Կարաստայակը գրավելու գործողությունը հաջող կատարելու և մոտ երկու ամիս թշնամու կատաղի գրոհներից այն քաջաբար պաշտպանելու համար, միավորման անձնակազմի զգալի մասը պարգևատրվեց կառավարական շքանշաններով ու մեդալներով։

Այդ նշանավոր օպերացիան հաջողությամբ իրականացնելու համար 174 հրաձգային դիվիզիան է այցելում ռազմաճակատի հրամանատար Սովետական Միության Մարշալ Ն. Ֆ. Վատուտինը և անձնակազմին շնորհավորում ձեռք բերած հաջողությունների համար։ Նա սրբատանց ողջունում է գնդապետ Կարապետյանին և միջնորդություն հարուցում դիվիզիային «Գվարդիա» պատվավոր կոչում շնորհելու մասին։ Դիվիզիայի հրամանատար գնդապետ Կարապետյանը ներկայացվում է Կուտուզովի 2-րդ աստիճանի շքանշանի պարգևատրման։ Նրան շնորհվում է գեներալ-մայորի զինվորական կոչում։ 1942 թվականի հոկտեմբերին թերթերում տպագրվում է հետևյալ հաղորդագրությունը.

«Գերմանական զավթիչների դեմ Հայրենիքի համար մղված մարտերում ցուցաբերած խիզախության, տոկունության, արիության, կարգապահության և կազմակերպվածության համար, անձնակազմի հերոսության համար՝ 174-րդ հրաձգային դիվիզիան վերափոխվում է 46-րդ գվարդիական հրաձգային դիվիզիայի։ Հրամանատար՝ գեներալ-մայոր Ս. Ի. Կարապետյան։ Վերափոխված դիվիզիային հանձնվում է Գվարդիական Դրոշ»։

Հանգստի և համալրման համար միավորումը դուրս է բերվում առաջավոր գծից։ Համալրում ստանալուց հետո այն փոխադրվում է Կալինինյան ռազմաճակատ՝ մասնակցելու Վելիկիյե Լուկի քաղաքի համար մղվող մարտերին։ 1942 թվականի նոյեմբերի սկզբներին դիվի-

ղիա է ժամանում երրորդ բանակի ռազմական սովետի ներկայացուցիչը՝ դիվիզիային Գվարդիական Դրոշ հանձնելու։

Այդ հանդիսավոր ակտը տեղի ունեցավ Կալինինյան մարզի ծառախիտ անտառներից մեկում։

Դիվիզիայի ամբողջ անձնակազմի ներկայությամբ Կարապետյանն ընդունում է Գվարդիական Դրոշը և երդվում է այն պահպանել աչքի լույսի պես, արբությամբ կատարել Սովետական Հայրենիքի, Կոմունիստական պարտիայի յուրաքանչյուր մարտական առաջադրանք։

— Այն բնագծում, ուր պաշտպանության է կանգնած «Գվարդիան», այնտեղ չի կարող առաջ անցնել ոչ մի գերմանացի։ Այն հատվածում, ուր հարձակվում է «Գվարդիան», դիմադրել չի կարող ոչ մի գերմանական դորամաս։

Կեցցե՞ սովետական անպարտ «Գվարդիան»։

Կարապետյանն այս սրտառուչ բառերով վերջացրեց Գվարդիական Դրոշն ընդունելու պահին արտասանած իր հուզիչ ճառը։ Նա ծնկաչոք համբուրում է Դրոշը և ապա ընդունում ռազմական արիության այդ ոգեշնչող խորհրդանիշը։

Գվարդիական Դրոշը հանձնվում է դիվիզիայում իր հերոսությամբ հռչակված դումարտակի հրամանատար մայոր Ֆիլատովին։ Հանդիսավոր քայլերգի նվագակցությամբ մայոր Ֆիլատովը Դրոշը անց է կացնում անձնակազմի շարքերի առջևից, որոնցից ռազմիկներից յուրաքանչյուրը խորապես զգա այն մեծ պատիվը, որին միավորումը արժանացել է իր մարտական խիզախ գործողություններով։

Հաջորդ առավոտ, երբ դեռ նոր էր լույսը բացվել, Գվարդիական Դրոշն անցավ գնդից-գունդ, դումարտակից-դումարտակ։ Նրա շուրջը կազմակերպվեց խոշոր քաղաքական-դաստիարակչական աշխատանք։ Հրամա-

նատարները, քաղաքական և պարտիական աշխատողները, ագիտատորները դիվիզիան նոր համալրած զինվորներին մանրամասն բացատրում էին, թե ինչպիսի թանկ գնով է ձեռք բերվել այդ ոսկեզօծ տառերով ասեղնագործված Դրոշը, թե որքան հերոս մարտիկներ արյուն են թափել և զոհել իրենց կյանքը, դիվիզիայի պատիվը բարձր պահելու և Հայրենի հողը թշնամուց ազատագրելու համար։ Նրանք ռազմիկներին կոչ էին անում միշտ հավատարիմ լինել միավորման մարտական տրադիցիաներին, Հայրենիքին տված զինվորական երդմանը, պատվով ու արժանապատվությամբ կատարել իրենց զորային պարտքը։

Այդ օրերին դիվիզիայի գնդերից, գումարտակներից և վաշտերից գվարդիայի գեներալ-մայոր Կարապետյանի հասցեով ստացվում են տասնյակ ողջույնի նամակներ, շնորհավորանքներ։ Դիվիզիայի ամբողջ անձնակազմը ուրախանում է նաև նրանով, որ իրենց հրամանատարը պարգևատրվել է Կուտուզովի երկրորդ աստիճանի շքանշանով և արժանացել գեներալի կոչման։

«Դիվիզիայի քաղբաժնի աշխատողները,— գրված է նամակներից մեկում,— շնորհավորում են Ձեզ Կուտուզովի 2-րդ աստիճանի կառավարական բարձր պարգև ստանալու կապակցությամբ և ցանկանում են Ձեզ էլ ավելի հաջողություններ գերմանա-ֆաշիստական զավթիչների դեմ մղվող հետագա մարտերում»։

Մի ուրիշ շնորհավորական նամակում ասված է.

«638-րդ գվարդիական հրաձգային գնդի կոմունիստները շնորհավորում են Ձեզ, ընկեր գվարդիայի գեներալ-մայոր, Կուտուզովի 2-րդ աստիճանի շքանշանով պարգևատրվելու առթիվ։

Այն ժամանակ, երբ ֆաշիստական հորդաները գրոհում էին մեզ վրա, գնդի կոմունիստները հերոսաբար ջախջախում էին թշնամուն։ Մենք ահ ու սարսափ տա-

բածեցինք գերմանական զորքերի շարքերում։ Սովետական կառավարությունը, Կոմունիստական պարտիան ըստ արժանվույն գնահատեցին մեր ռազմի աշխատանքը։ Մեր միավորմանը շնորհվեց գվարդիականի բարձր կոչում։ Մենք խոստանում ենք առաջիկա մարտերում ավելի ուժեղ հարվածներ հասցնել ֆաշիստական զավթիչներին։ Մենք սրբությամբ կկատարենք մեր զորային վսեմ պարտքը մայր-Հայրենիքի հանդեպ։ Գնդի պարտիական կազմակերպությունը կանի այն ամենը, ինչ որ անհրաժեշտ է մարտական բոլոր առաջադրանքները հաջողությամբ կենսագործելու համար։

Մա՛հ գերմանական օկուպանտներին»։

Այս նամակի տակ ստորագրել են 100-ից ավելի շքանշանակիր կոմունիստ-ռազմիկներ, որոնք միշտ էլ եղել են արյունահեղ մարտերի առաջավոր գծում, ռազմաճակատի ամենապատասխանատու և դժվարին հատվածներում։

Այդ օրերին գեներալը հարյուրավոր նամակներ է ստանում զինվորներից, սերժանտներից և սպաներից, նամակներ ու հեռագրեր են գալիս նաև թիկունքից՝ հարազատներից ու ընկերներից։

ՊՏԱԽԻՆՅԱՆ ԲԱՐՁՈՒՆՔԸ

Դիվիզիան գտնվում էր Կալինինյան ռազմաճակատում՝ Վելիկիե Լուկի քաղաքի մոտերքում։

Աշուն էր։ Անձրևային անընդհատ տեղումները ավելի էին բարդացրել ռազմաճակատային պայմանները։

Սովետական զորամասերին կորուստներ հասցնելու համար, թշնամին դիմում էր ամեն մի նենգ միջոցի։ Գերմանական սավառնակների անընդհատ հարձակումները և հրետանային ու ականանետային հարատև կրակը հանգստություն չէին տալիս առաջավոր գծում գտնվող մեր զորքերին։

Շուտով դիվիզիան առաջադրանք ստացավ գրավել Չերնոզյոմ կայարանը։ 1942 թվականի նոյեմբերի 25-ին դիվիզիայի զորամասերը գրոհեցին Գարելովո, Կաստելովո, Մաշուտիկինո բնակավայրերը։

Թշնամին կատաղի դիմադրություն էր ցույց տալիս։ Նա կառչում էր յուրաքանչյուր բարձունքից ու շենքից, սակայն գվարդիականների ճնշումը զսպել չէր կարողանում։

Դիվիզիան պատվով կատարեց իր մարտական առաջադրանքը՝ կարճ ժամանակամիջոցում գերմանա-ֆաշիստական զավթիչներից ազատագրեց Չերնոզյոմ կայարանը։ Այդպիսով, Վելիկիե Լուկիում գտնվող գերմանական կայազորը շրջապատվեց։ Օղակը ճեղքելուն ուղղված հիտլերականների բոլոր փորձերն ապարդյուն անցան։

Գվարդիական դիվիզիայի զորաղնդերը չէին կարող հանգստանալ ձեռք բերած նվաճումներով։ Հիտլերականների դիրքերը ռազմաճակատի այդ հատվածում ավելի շահավետ էին։ Նրանց ձեռքին էր գտնվում ռազմական խոշոր նշանակություն ունեցող Պատախինյան բարձունքը։ Այնտեղից ֆաշիստների համար լավ տեսանելի էին մեր զորքերի մարտակարգերը և, անդամ 6—8 կիլոմետր խորության վրա գտնվող, թիկունքը։

Այդ բարձունքը գերմանացիները բառիս բուն իմաստով զրահապատել էին մետաղից և ցեմենտից պատրաստված մշտական կրակակետերով։ Նրանք թաղվել էին մեծ խորություն ունեցող խրամատներում։ Բարձունքի վրա գտնվող դզոտերը ութից-տասն շերտ ծածկեր ունեին։ Նրանց պաշտպանագծի առաջակողմով հուսալի լարափակոցներ էին անցկացված, որոնցից յուրաքանչյուրը իր հերթին ուներ 2—3 գիծ։ Լարափակոցների միջև ընկած տարածությունը ամբողջովին ականապատված էր։

Սովետական զորքերի դրությունը ռազմաճակատի այդ հատվածում ավելի շահավետ դարձնելու համար անհրաժեշտ էր անպայման խլել այդ բարձունքը հիտլերականներից։

Կարապետյանը հատուկ զեկուցագրով դիմեց վերադաս հրամանատարությանը, խնդրելով, որ Պտախինյան բարձունքի գրավումը հանձնարարեն իր միավորմանը։

Վերադաս հրամանատարությունը հավանություն տվեց Կարապետյանի նախաձեռնությանը։

Սկսվեցին նախապատրաստական աշխատանքները։ Ինչպես միշտ, այնպես էլ այս անգամ, առաջինը գործի անցան հետախույզները։

Ռազմաճակատի այդ հատվածում մերոնք երկար ժամանակ չէին կարողանում «լեզու» ձեռք բերել։ Գեներալն անձամբ գնաց հետախույզների մոտ։ Բացատրեց իրադրությունը և պահանջեց ինչ գնով էլ լինի «լեզու» բերել։ Միաժամանակ նա հետախույզներին պարտավորեցրեց մանրամասն ուսումնասիրել գերմանացիների ամրությունների բնույթը, ճշտել Պտախինյան բարձունքի վրա գտնվող հիտլերականների քանակը, սպառազինությունը։

— Առաջադրանքը դժվարին է,— ասաց գեներալը,— սակայն պատվավոր։ Ձեզ սպասում են ծանր ու վտանգավոր փորձություններ, դուցե և մահ։ Բայց նա, ով սիրում է Հայրենիքը, ով չի ուզում ստրուկ դառնալ գերմանական ֆաշիստներին, նա չպետք է վախենա մահից։ Զգիտակցված մահը՝ մահ է, իսկ գիտակցված մահը՝ անմահություն,— այսպես է ասում ժողովրդական իմաստությունը։ Դե, ձեզ տեսնեմ, իմ արծիվներ։

Գեներալը սեղմեց շարք կանգնած և մարտական առաջադրանքը կատարելու պատրաստ հետախույզներից յուրաքանչյուրի ձեռքը, համբուրեց վաշտի հրամա-

նատար խիզախ հետախույզ լեյտենանտ Սորոկինի ճակատը ու հաջողություն ցանկանալով, հրաժեշտ տվեց։

Երբ գիշերային սև վարագույրը իջավ սաղարթախիտ անտառի վրա, հետախույզները, նախապես նշված մարշրուտով, ուղղվեցին դեպի առաջավոր գիծը։

Նրանց առաջին օրվա մարտական արշավը ապարդյուն անցավ։ Թշնամին նկատել ու ականանետային կրակ էր բացել հետախույզների վրա։ Ցանկացած արդյունք չտվեցին ո՛չ երկրորդ և ո՛չ էլ հետագա ռազմերթերը։ Նրանք չկարողացան «լեզու» վերցնել։ Գերմանացիները ամրապնդվել էին այդ բարձունքի վրա, ինչպես գաղանը երկաթապատ վանդակում։ Սակայն հետախույզ ռազմիկները կարողացան կարևոր տվյալներ ձեռք բերել տեղանքի մասին։ Բացի դրանից, նրանք ավելի ստույգ տեղեկություններ բերեցին թշնամու ուժերի և սպառազինության վերաբերյալ։ Կատարեցին հակառակորդի պաշտպանությունը պատկերող մի շարք նկարահանումներ։

Գեներալի առաջարկով դիվիզիայի թիկունքում պատրաստվեց նույնանման մի բարձունք։ Այն գոտեպատվեց համապատասխան ամրություններով ու արգելափակոցներով։ Այդ բարձունքի շուրջը կազմակերպվեցին մի շարք վարժական մարտեր, որոնց ընթացքում ռազմիկներն ու հրամանատարները գործնականում զգացին այն բոլոր դժվարությունները, որ իրենք պիտի հաղթահարեն Պատախինյան բարձունքին տիրապետելու համար։

Որպեսզի ֆաշիստները չկռահեն ու նախօրոք չիմանան մերոնց մտահղացումների մասին, թե՛ վարժական պարապմունքները և թե՛ դալիք մարտերին նախապատրաստվելու բոլոր տեսակի աշխատանքները հիմնականում կատարվում էին գիշերային պահին։

Այդ պարապմունքների ընթացքում ռազմիկները

վարժվում էին ուժեղ կերպով ամրացված պաշտպանական գիծը հաղթահարելու և սրընթաց մարտ վարելու մեջ։ Սակրավորները կատարելագործում էին իրենց գիտելիքները ականազերծելու գործում։ Նրանք ավելի լավ տիրապետեցին լարափակոցների խիտ շարքերի միջով ճանապարհ բացելու վարպետությանը։ Հետևակային ստորաբաժանումների ռազմիկները վարժվեցին լարափակոցները թռիչքով հաղթահարել, գրոհի պահին չհապաղել և անընդհատ առաջ շարժվել։ Հարուստ փորձ կուտակեցին նաև կապավորներն ու հրետանավորները։

Վերջապես սկսվեցին բարձունքը գրոհելու անմիջական գործողությունները։ Երեք օր ու գիշեր սակրավորները չէին հեռանում թշնամու լարափակոցների մոտից։ Ցերեկները հանգստանում էին վարպետորեն քողարկվելով, որպեսզի հակառակորդը չնկատի, իսկ երբ վրա էր հասնում գիշերվա թանձր խավարը, սկսում էին գործել։ Սկզբում նրանք անցումներ բացեցին լարափակոցներում, ապա սկսեցին ականազերծ անել այդ անցումների միջև ընկած տարածությունը։ Բացված անցումները աննկատ դարձնելու համար սակրավորները կտրատված փշալարերը նորից թույլ կերպով միացնում էին իրար։

Բարձունքի գրոհումը նշանակված էր 1943 թվականի հունիսի 22-ին՝ Հայրենական Մեծ պատերազմի երկրորդ տարեդարձի օրը։

Հրետանային նախապատրաստումից հետո դիվիզիայի ռազմիկները, գիշերվա ժամը երեքին գրոհեցին թշնամու առաջավոր գիծը։ Օգտագործելով լարափակոցներում նախապես պատրաստված անցումները, նրանք արագորեն հասան հիտլերականների խրամատներին ու տեղն ու տեղը սկսեցին բնաջնջել թշնամուն։

Հանկարծակիի բերված ֆաշիստները գաղանային աղմուկ բարձրացրին։ Նրանք փորձում էին փախչել՝

գվարդիականների դիպուկ հարվածներից խուսափելու համար։ Սակայն այդ չէր հաջողվում։ Բարձունքի վրա բուն դրած գերմանական ուժերի մեծ մասը ոչնչացվեց, իսկ կենդանի մնացածները գերի վերցվեցին։

Հազիվ էր մեկ ժամ անցել գրոհի սկզբից, երբ դիվիզիայի հրամանատարական կետում հաղորդում ստացվեց Պատախինյան բարձունքը գրավելու մասին։ Շուտով բարձունքի գագաթին ծածանվեց գվարդիականների հաղթական Դրոշը։

Հետևյալ օրը գերմանացիները դեպի բարձունքը քաշեցին թարմ ուժեր։ Ֆաշիստները 12 օր անընդհատ գրոհում էին գվարդիականների վրա, որպեսզի վերականգնեն գրությունը և գարձյալ տիրանան Պատախինյան բարձունքին։ 12 օրվա ընթացքում նրանք 36 անգամ գրոհեցին բարձունքը, ավելի քան 80 հազար արկ ու ական ուղղեցին այդ բարձունքի վրա գտնվող սովետական ռազմիկների կողմը, սակայն նրանց ճիգերը ոչ մի արդյունք չտվեցին։ Գվարդիականները այնքան ուժեղ ամրապնդվեցին Պատախինյան բարձունքում, որ ավելի հեշտ էր այն հօդս ցնդեցնել, քան նրանց ցած իջեցնել այնտեղից։

Պատախինյան բարձունքի համար ծավալված այդ համարձակ ու բարդ օպերացիայի ժամանակ դիվիզիայի հրամանատարական կետումն էին գտնվում ռազմաճակատի ներկայացուցիչները, ինչպես նաև բանակի և կորպուսի հրամանատարները։ Այնտեղ էին հավաքվել զինվորական թերթերի շատ թղթակիցներ ու լուսանկարիչներ։ Ինքը՝ Կարապետյանը, մարտական գործողությունների սկզբից մինչև վերջ գտնվում էր զնդերից մեկի հրամանատար՝ զնդապետ Ռոմանենկոյի հրամանատարական կետում։ Նա հենց այդտեղից էլ ղեկավարում էր զորամասերի գործողությունները։ Իսկ երբ բարձունքի կատարին ծածանվեց ալ Դրոշը, Կարա-

պետությանը ուղղվեց դեպի Պատախինյան բարձունքի գագաթը՝ ողջունելու և շնորհավորելու հերոս զինվորներին։

— Ընկեր գվարդիայի գեներալ, առջևում երկյուղ կա։ Տեսնում եք դեռ կատաղած շունը չի հանգստացել, կրակում է։— Դիմելով գեներալին, ասաց դաշտային պահակությունում գտնվող մի զինվոր։

— Իսկ դուք ի՞նչ եք անում այստեղ։ Մթե՞ ձեզ համար երկյուղ չկա,— ժպտալով հարցրեց գեներալը...

Զինվորը հուզվեց։

— Մենք... Դե մենք, զինվոր ենք...

— Իսկ մենք զինվոր չե՞նք... Մենք էլ ենք զինվոր, սիրելիս։ Մենք բոլորս էլ Հայրենիքի զինվորներն ենք,— ասաց գեներալը և մարտիկին խրախուսելով առաջ անցավ։

* * *

Ըստ սովորականի, իր ռազմաճակատային կյանքի մեծ մասը Կարապետյանը անց էր կացնում խրամատներում, զինվորական սաուռ ու խոնավ բլինդաժներում։ Ընկերական զրույցի էր նստում շարքային զինվորների, ջոկերի ու դասակների, վաշտերի ու գումարտակների հրամանատարների հետ։ Հետաքրքրվում էր նրանց կյանքով, քաջալերում և հայրական խորհուրդներ տալիս նրանց։

Գեներալը սիրում էր իր ենթականերին։ Հարազատներից ու ծնողներից հեռացած, կռվի ծանր լուծը տանող զինվորների համար, նա պահանջկոտ և հոգատար հրամանատար էր։ Զինվորներն էլ իրենց հերթին հարգում և սիրում էին նրան։

Հետախուզական վաշտի երիտասարդ, քաջ ու համարձակ հրամանատար Վասիլի Սորոկինը, երբ ծանր վիրավորվեց, գեներալն անձամբ զբաղվեց նրան բժշկասանիտարական գումարտակը փոխադրելու հարցով։

— Ինձ զեկուցեցին,— պատմում է գեներալը,— որ Սորոկինը մահամերձ է։ Ես իսկույն գնացի նրա մոտ։ Տեսնեմ Սորոկինը պառկած է մահճակալի վրա և հազիվ շունչ է քաշում։ Սակայն ինձ նկատելով, նա սթափվեց և, կարծես թե, ուզում էր վեր թռչել տեղից։ Ես հանգըստացրի նրան։

Սորոկինը հայացքն ուղղեց իմ կողմը ու հազիվ լսելի ձայնով ասաց. «Ես դուցե մեռնեմ, ընկեր գվարդիայի գեներալ, բայց խնդրում եմ, որ անունս չջնջեք հետախուզական վաշտի ցուցակից։ Եվ թող բոլորն իմանան, որ իմ կարճատև կյանքը ես նվիրեցի մեր Սովետական Հայրենիքի ազատագրման գործին»։ Ես վիրաբույժին առաջարկեցի ինչ գնով էլ լինի, փրկել Սորոկինի կյանքը։ Վիրաբույժը խոստացավ ոչինչ չխնայել, բայց վերջում, երբ մենք հեռացանք Սորոկինի մոտից, նա ասաց, որ ինքը շատ հույս չունի, որ Սորոկինը կարող է ապրել ևս մի շաբաթ։ Անցավ տասը օր, Սորոկինը դեռ կենդանի էր, անցավ քսան օր Սորոկինն արդեն բավական կազդուրվել էր, իսկ 45 օրից հետո նա բոլորովին առողջացավ ու կրկին շարք վերադարձավ։

Ես նրան ինձ մոտ կանչեցի և առաջարկեցի արձակուրդ դնալ։ Բայց նա չցանկացավ ու խնդրեց շարքում թողնել իրեն մինչև Հայրենական Մեծ պատերազմի հաղթական ավարտը։

Պատախինյան բարձունքի գրավման կապակցությամբ դիվիզիայի անձնակազմից ավելի քան 700 հոգի արժանացան կառավարական բարձր պարգևների։ Կալինինյան ամբողջ ռազմաճակատում այն օրերին բոլորը խոսում էին Պատախինյան բարձունքի գրավման և 46-րդ գվարդիական դիվիզիայի ռազմիկների հերոսական սխրագործությունների, նրանց համարձակության ու խիզախության մասին։

ՆԵՎԵԼՅԱՆ ՕՊԵՐԱՑԻԱՆ

Շատ ավելի ծանր ու բարդ էին Նևելի ազատագրման համար մղված մարտերը։ Հենց որ Կալինինյան ռազմաճակատի զորքերը գրավեցին Նևել քաղաքը, Կարապետյանի դիվիզիան առաջադրանք ստացավ լայնացնել ու ավելի խորացնել գերմանացիների պաշտպանագծում ստեղծված ճեղքվածքը և հետապնդել ու ոչնչացնել նահանջող հիտլերականներին։

Սերտորեն համագործակցելով հարևան զորամասերի հետ, զարգացնելով իրենց հաջողությունները, Կարապետյանի զորագնդերը դուրս եկան գերմանական 240-րդ գնդի թիկունքը և սկսեցին ոչնչացնել թշնամու կենդանի ուժը, ջախջախել նրա տեխնիկան, պայթեցնել ռազմամթերքներով լիքը պահեստները։ Այդ դոտեմարտում ոչնչացվեց գերմանական ավելի քան 2.000 զինվոր ու սպա։ Դիվիզիան վերցրեց մեծ քանակությամբ ռազմաավար, որոնց թվում զինամթերքի, հանդերձանքի և պարենամթերքի մի քանի պահեստ։

Շնորհիվ հմուտ մանյովրի ու սրընթաց հարձակման, Օպուխլիկի կայարանում դիվիզիայի գնդերից մեկը կարողացավ կասեցնել զինամթերքով ու հանդերձանքով բեռնված ֆաշիստական մի քանի էշելոնների Գերմանիա ուղարկելը։ Միավորումը հինգ օր անընդհատ արյունահեղ մարտեր էր մղում կատաղորեն դիմադրող հիտլերականների դեմ։ Իրենց որջերից դուրս բշված գերմանացիները կառչում էին յուրաքանչյուր փոքր, թե մեծ բնակավայրից, ամեն մի բնադծից։ Հիտլերականները մի փոքր սթափվելու միջոց էին փնտրում, որպեսզի կենտրոնացնեն իրենց ուժերը, նոր պաշտպանագիծ ստեղծեն ու արդելակեն մեր զորքերի հետագա առաջխաղացումը։ Սակայն ռազմաճակատի այդ հատվածում հարձակվող Սովետական զորքերը քուն ու դա-

դար չէին տալիս թշնամուն։ Նրանք անընդհատ ու համառորեն հետապնդում էին ֆաշիստներին։ Սովետական ռազմիկներն իրենց վրեժն էին լուծում մեր այրված քաղաքների ու գյուղերի համար, սպանված ու կախաղան բարձրացված հազարավոր քաղաքացիների համար, բազմաթիվ խոշտանգված երեխաների, կանանց և ծերունիների համար։ Նրանք կատարում էին իրենց ժողովուրդների, իրենց հայրերի ու մայրերի, քույրերի ու եղբայրների պատվիրանը՝ տուն վերադառնալ միայն հաղթանակով։

Նևելի շրջանում մարտական գործողությունները հաջող վարելու, ռազմավարական հմտություն և հնարամտություն ցուցաբերելու համար, ՍՍՌ Միության Գերագույն Սովետի Նախագահության Հրամանագրով Կարապետյանը պարգևատրվում է Կարմիր Դրոշի շքանշանով։ Դա կառավարական երկրորդ պարգևն էր, որին արժանացավ գեներալը Հայրենական Մեծ պատերազմի պատմական օրերին։

* * *

Կոմունիստական պարտիայի կողմից դաստիարակված Սովետական Հայրենիքին անձնուրացաբար նվիրված գեներալը միշտ արժանապատվությամբ էր կատարում մարտական ամեն մի առաջադրանք։

Գեներալ Ս. Ի. Կարապետյանը երբեք չէր մոռանում հայ ժողովրդի կողմից ռազմաճակատում գտնվող հայ մարտիկներին ուղղված նամակում գրված հետևյալ խոսքերը. «Եղեք ձեր ժողովրդին արժանի մե՛ր զավակներ, մինչև վերջը ջարդեցեք ու մեր հողերից դուրս շպրտեք գերմանական զավրելի հրեշին։ Ոչ մի բոպե մի մոռացեք, որ հիտլերյան արյունարբու բորենու դեմ մղվող պատերազմում վճռվում է Սովետական Միության բախ-

տը, հայ ժողովրդի բախտը։ Բազմապատկեցեք ձեր զենքի ուժը, էլ ավելի կոփեցեք ձեր սրտերը։ Կանգ մի առեք ոչ մի դժվարության առաջ, քարուքանդ արեք ֆաշիստական ամրությունները, ոչնչացրեք նրանց տեխնիկան ու կենդանի ուժը։ Անընդհատ շարժվեցեք դեպի արևմուտք։ Դուք կենդանի պահեք ձեր սրտերում մեր ծերունի բանաստեղծի հավատով լի խոսքը.

«...Երևում է կատարն անամպ ու հստակ,
Բայց եթե չը հասնենք մենք այնտեղ այսօր,
Վաղն այնտեղ ենք անշուշտ, մերն է
Հաղթանակ...
Դեպի վեր, սարն ի վեր, անվեհեր զինվոր»։

Նամակում բերված այս տողերը շատ էին դուր գալիս գեներալին։ Նա մեծ սիրով անգիր էր արել այդ իմաստալից խոսքերը և հաճախ կրկնում ու ոգեշնչվում էր դրանով։

Երբ հանդարտվեցին Նևելի համար մղվող մարտերը և միավորումը դուրս եկավ հանդստի, Կարապետյանը իր մոտ հավաքեց դիվիզիայում ծառայող հայ ռազմիկներին, որպեսզի անձամբ հաղորդի նրանց հայ ժողովրդի պատվիրանը։

Գեներալի հրամանատարական կետը հավաքվեցին տասնյակ հայ ռազմիկներ՝ սպաներ, սերժանտներ և զինվորներ։ Այստեղ էին քաջ հրետանավոր կապիտան Թորոս Շեխոյանը՝ Դյուզքենդի շրջանի Ղազանչի գյուղից, հետախույզ զինվոր Մարտիրոս Ստեփանյանը՝ Սևանի շրջանի Դրմաշեն գյուղից, սերժանտ Ավագ Սահակյանը՝ Արտաշատի շրջանի Ջրաշեն գյուղից, զանգեզուրցի զինվոր Գուրգեն Հակոբյանը, Նորքայաղեցի մայոր Հովհաննես Ղամարյանը, ռադիստ լեյ-

տենանտ Վարդան Վարդանյանը՝ Երևանից, և շատ ուրիշ հայ ռազմիկներ։

Երբ գեներալին զեկուցեցին, որ նրա հրամանով դիվիզիայում ծառայող մի խումբ հայ ռազմիկներ ներկայացել են, նա դուրս եկավ գետնափոր տնակից և ջերմորեն ողջունեց նրանց։ Որպես հարազատ մարդկանց ընդունեց հյուրերին, սեղմեց բոլորի ձեռքը ու ապա հարցրեց.

— Հը՞... Ո՞նց եք, Հայաստանի զավակներ...

— Շատ լավ ենք, ընկեր գվարդիայի գեներալ,— միաբերան պատասխանեցին ռազմիկները։ Գեներալն իր զննող հայացքը դցեց ռազմիկների կրծքերին ու ասաց.

— Էդ ինչո՞ւ այդքան քիչ են ձեր շքանշանները։ Երևի վատ եք կռվում...

— Ոչ, ընկեր գվարդիայի գեներալ, վատ չենք կռվում,— կարծես թե լիազորված լինելով բոլորի կողմից, պատասխանեց կապիտան Շեխոյանը,— մարտընչում ենք անձնուրացարար։ Իսկ թե շքանշաններս են քիչ, փույթ, չէ, էլի կստանանք։

— Մինչև այժմ միշտ էլ բարձր ենք պահել հայ ժողովրդի պատիվը, սովետական ռազմիկի պատիվը,— ավելացրեց մի ուրիշ ռազմիկ,— այսուհետև էլ կարդարացնենք մեզ։

— Գիտեմ, գիտեմ,— ասաց գեներալը,— ձեր մասին ինձ արդեն զեկուցել են։ Չեմ կասկածում, որ դալիք մարտերում է՛լ ավելի խիզախորեն կմարտնչեք մեր հարազատ Սովետական Հայրենիքի աղատության և անկախության համար։ Իսկ այժմ, խնդրեմ, ներս անցեք իմ «սալատը»,— կատակելով ասաց նա։— Այսօր ես ձեզ պետք է ծանոթացնեմ ռազմաճակատում դտնվող հայ ռազմիկներին ուղղված հայ ժողովրդի նամակի բովանդակությանը։

Այդ «պալատը» բաղկացած էր երեք սենյակից։ Նրանցից մեկը խոհանոցի դեր էր կատարում, երկրորդը՝ գեներալի աշխատասենյակն էր, իսկ երրորդը՝ ննջարանը։ Գեներալի գետնափոր տնակի կահավորանքը շատ հասարակ էր։ Ննջարանում բացի մի սեղանից, տախտակից պատրաստված մահճակալից, որի վրա գտնվում էր գեներալի անկողինը, ուրիշ ոչինչ չկար։ Ավելի պարզ էր գեներալի աշխատասենյակի կահավորանքը։ Այստեղ պատուհանի առջև պատրաստված էր մի հասարակ սեղան, որի աջ կողմում հեռախոսի ապարատն էր, իսկ ձախ կողմում դարսված էին զանազան գրքեր։

— Դե, ուրեմն, լսեք ինձ։ Այժմ մենք կկարդանք այս պատմական և բոլորիս համար թանկարժեք նամակը։ Այստեղ կա և՛ մայրական կարոտ, և՛ հայրական սեր և՛ խրատ և՛ պահանջ։ Սա մեր ժողովրդի սրտից բխած մի խոսք է, որը մեզ վճռական մարտի ու հաղթանակի է կոչում։

«Մեր ժողովրդի սիրելի զավակնե՛ր,— սկսեց նամակի ընթերցումը գեներալը,— մեր քաջարի մարտիկնե՛ր և հրամանատարնե՛ր։

Այս նամակով ամբողջ հայ ժողովուրդը հղում է ձեզ՝ իր հարազատ զավակներին սրտագին, բոցավառ ողջույն։

Ահա արդեն քսան ամիս է, ինչ դուք Հայրենիքի հանդեպ կատարելով ձեր սրբազան պարտքը, եղբայրական ժողովուրդների զավակների հետ ուս-ուսի տված՝ մարտնչում եք գերմանա-ֆաշիստական արյունարբուների դեմ, կրծքով պաշտպանում Սովետական Հայրենիքը, նրա ազատությունը և անկախությունը, ձեր հայրերի, մայրերի, երեխաների կյանքը, ձեր կանանց ու քույրերի պատիվը...։

...Հայ մարտիկնե՛ր։

Ատեցեք թշնամուն ձեր հոգու ամբողջ ուժով, թող այդ ատելությունը ձեր կրծքերը դարձնի պողպատակուռ զրահ, ձեր բազուկներին տա անսպառ կարողություն...»։

Ռազմիկները ուշի-ուշով լսում էին գեներալին։ Նամակի յուրաքանչյուր բառը նրանց հիշողության մեջ վերականգնում էր Հայրենի հողը, բարձրաբերձ լեռներն ու սառնորակ աղբյուրները։ Նրանք մտքով փոխադրվում էին իրենց հարազատ օջախը։ Նրանց մեջ ավելի ու ավելի էր բորբոքվում ատելության զգացմունքը անարգ թշնամու նկատմամբ։

«...Մեր ավագ եղբայր ռուս մեծ ժողովրդի զինավորությամբ,— շարունակեց նամակի ընթերցումը գեներալը,— մարտնչեցեք թշնամու դեմ մեր եղբայրական ժողովուրդների զավակների հետ կողք-կողքի, ձեռք-ձեռքի տված։ Ամրապնդեցե՛ք ռազմաճակատներում անխախտ բարեկամությունն ու եղբայրությունը։ Հիշեցե՛ք, որ այդ եղբայրության մեջ է մեր հզոր Հայրենիքի, Սովետական Միության անպարտելիությունը։

...Սրբորեն, ժամանակին կատարեցեք ձեր հրամանատարների ու պետերի հրամանները»։

— Լսում եք՝ սրբորեն և ժամանակին կատարեցեք ձեր հրամանատարների ու պետերի հրամանները...— ընդգծեց գեներալը։

— Լսում ենք, ընկեր գվարդիայի գեներալ,— որպես երդում պատասխանեցին ռազմիկները։

Նամակի վերջին տողերը գեներալը կարդում է ավելի ոգևորված։ Հետո նա վեր է կենում տեղից և շարունակում է.

«Հաստատ է մեր հավատը հաղթանակի նկատմամբ։ ...Հեռու չէ այն օրը, երբ սովետական հողը կմաքրվի գերմանա-ֆաշիստական գարշելի օկուպանտներից։ Նորից ազատ կշնչեն մեր տառապած եղբայր-

ներն ու քույրերը, նորից կծաղկեն ու կփթթեն մեր քաղաքներն ու գյուղերը, թնդանոթների որոտի փոխարեն նորից մեր դաշտերում կթնդա խաղաղ աշխատանքի ու շինարարության երգը։

Հավատում է դրան Սովետական ամբողջ երկիրը, ամբողջ սովետական ժողովուրդը։

Դրա գրավականն է Կարմիր Բանակի հարվածների օրեցօր աճող ուժը։ Դրա գրավականն է Սովետական Միության ժողովուրդների անխախտ բարեկամությունը, նրանց անսահման նվիրվածությունն իրենց Հայրենիքին, իրենց Հարազատ բոլշևիկների պարտիային...»։

— Ահա մեր ժողովրդի կոչը, մեր հարազատների պատվիրանը։ Դե, ձեզ տեսնեմ։ Կատարեցեք այն որպես հերոս մարտիկներ։ Համարձակորեն հարվածեցեք ֆաշիստական ճիվաղներին, չխնայելով ձեր ուժերը և բուն իսկ կյանքը։

Այսպես ավարտեց գեներալը այդ սրտառուչ նամակի ընթերցումը։

Հայ ռազմիկները խոստացան պատվով ու անձնուրացարար կատարել իրենց ժողովրդի պահանջը և մեծ զոհունակությամբ հեռացան գեներալի հողատնակից։

Արևն արդեն մայր էր մտել։ Նրանք բաժանվեցին իրարից, յուրաքանչյուրը դեպի իր ստորաբաժանումը ուղղվելով։ Նրանցից ամեն մեկի հիշողության մեջ անջնջելի կերպով տպավորվեցին հայ ժողովրդի նամակի այն խոսքերը, որ քանի գերմանա-ֆաշիստական թեկուզ մեկ զավթիչ դեռ գտնվում է մեր հայրենի հողի վրա՝ ռազմադաշտը լքող ամեն մի հայ մարտիկի առաջ փակ կլինեն հայրենի օջախի դռները։ Որ հայրերն ու մայրերը, սիրելիներն ու հարազատները սպասում են իրենց՝ միմիայն հաղթանակով։

ՊԵՉԱՆԵ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԳՐԱՎՈՒՄԸ

Կարճատև ընդմիջումից հետո, դարձյալ սկսվեցին մարտական թեժ ու լարված օրերը։ 1944 թվականի գարնանը դվարդիայի գեներալ-մայոր Կարապետյանը իր դիվիզիայով գտնվում էր երկրորդ Մերձբալթյան ռազմաճակատում։

Սովետական Զինված Ուժերի մեկը-մյուսին հաջորդող վճռական ու խորտակիչ հարվածները քայքայում էին թշնամու պաշտպանական բնագծերը, պայմաններ ստեղծում մեր զորքերի հաջող առաջընթացի համար։

Լենինգրադի ռազմաճակատի զորքերը, Լենինգրադի մարդը լիովին մաքրելուց հետո, ֆաշիստներին քշել էին Մերձբալթիկա և շարունակում էին ջախջախել նրա կենդանի ուժն ու տեխնիկան։

Այդ օրերին Կարապետյանի դիվիզիան առաջադրանք ստացավ գրավել գերմանացիների կողմից ուժեղ կերպով ամրացված Պեչանե հենակետը, որը խոշոր նշանակություն ուներ Մերձբալթիկայում նախապատրաստվող հարձակողական մարտերի ելքի համար։

— Ինձ իր հրամանատարական կետը կանչեց բանակի հրամանատար գեներալ գնդապետ Չիրիսովը,— ասում է Կարապետյանը,— և առաջարկեց ինչ գնով էլ լինի գրավել Պեչանե բնակավայրը, որը գերմանացիները վերածել էին ամրոցի։ Մեզ հայտնի է,— ասաց նա,— որ դուք նման գործողություններ կատարելու համար հարուստ փորձ ունեք։ Մենք դեռ չենք մոռացել Պտախինյան օպերացիան, որը դուք հիանալի կերպով կազմակերպեցիք և հաղթանակով ավարտեցիք։

Առաջադրանքը շատ բարդ էր։ Ռազմաճակատի այդ հատվածում երկար ժամանակ մարտեր տեղի չէին ունեցել և, օգտվելով հանգամանքից, հիտլե-

ռականները Պեչանեն վերածել էին ամրահպատված ու շրջանաձև պաշտպանության համար նախապատրաստված հենակետի։ Այստեղ ստեղծված էր երկաթ-բետոնային կրակակետերի համատարած ցանց։ Այդ կրակակետերը իրար հետ կապված էին ստորերկրյա ուղիներով։ Պատրաստված էին հակատանկային փոսեր, երկուսից-երեք շարքի հասնող խրամատներ։ Ինչպես և միշտ, դրանց առաջեղրով ձգվում էր լարափակոցների խիտ ցանցը։

Խորապես ըմբռնելով առաջադրանքի կարևորությունը, Կարապետյանը բանակի հրամանատարին խոստացավ, որ բոլոր ջանքերը կգործադրի այն կատարելու համար։ Միայն խնդրեց, որ հրետանին, ինչպես հարկն է, օգնի իրենց։

Հենց նույն օրը գեներալը իր մոտ կանչեց Միավորման գնդերի հրամանատարներին և հայտնեց մարտական նոր խնդիր ստանալու մասին։ Մանրամասն բացատրեց յուրաքանչյուր գնդի անելիքը։ Հետևյալ օրը, կես գիշերին, սկսվեց մարտը։

Ցրելով գիշերային թանձր խավարը, հրետանային արկերն ուժգին սուլոցով թռչում էին յուրայինների խրամատների վրայով և ականջ խլացնող պայթյունով ջարդուփշուր անում թշնամու ամրությունները։ Երկու ժամ անընդհատ հարվածում էին մեր ծանր ու թեթև հրանոթները։ Ուժեղ կրակը քարուքանդ արեց գերմանացիների բլինդաժները, խրամատները և լարափակոցները։

Հրետանային վերջին արկերի դղրդյունը դեռ չէր լռել, երբ զրոհի բարձրացավ հետևազորը։ Սովետական Բանակի քաջակորով ռազմիկները հասակով մեկ ոտքի ելան և, «ուռա» բացագանչելով, հարձակվեցին թշնամու վրա։ Բայց հենց որ հասան Պեչանեն բնակավայրին, ստիպված եղան պառկել։

Հիտլերականները ուշքի եկան և ուժեղ կրակ բացեցին մերոնց վրա։ Նրանք երկար դիմադրեցին Պեշանեն բնակավայրը իրենց ձեռքից բաց չթողնելու համար, բայց իզուր։ Նրանց ջանքերն ապարդյուն անցան։ Իրիկնադեմին Պեշանեն ազատագրվեց։

— Հենց որ Պեշանեն գրավեցինք, այդ առթիվ,— ասում է գեներալը,— ես իսկույն զեկուցեցի բանակի հրամանատարին, թե առաջադրանքը կատարված է։ Սակայն նա չէր հավատում։ Ձեմ տեսնում ասում էր նա, «նշան բարձրացրեք»։ Ես բնակավայրում գտնվող ստորաբաժանումներին հրամայեցի բնակավայրի վրա տակված եկեղեցու վրա որևէ մի նշան բարձրացնել, որպեսզի բանակի հրամանատարը իր դիտակետից տեսնի այն։ Հետո համոզվելով դրանում, հեռախոսի մոտ կանչեց ինձ ու ասաց. «Այժմ տեսնում եմ»։ «Կեցցե՞ք»։

Բայց գերմանական զավթիչները չէին կարող հաշտվել այդ մեծ կորստի հետ։ Նրանք հույս ունեին նորից տիրանալ Պեշանե բնակավայրին ու այդ նպատակով դիմեցին հակագրոհի։ Մեկ օրվա ընթացքում հիտլերականները վեց անգամ գրոհեցին մեզ վրա, բայց բոլոր գրոհները ետ մղվեցին։ Սովետական ռազմիկներն ամուր ու անսասան մնացին իրենց դիրքերում։

Բանակի հրամանատարը շատ գոհ մնաց այդ օպերացիայից և գեներալ-մայոր Կարապետյանին ու նրա հրամանատարության տակ գտնվող միավորման ամբողջ անձնակազմին հատուկ հրամանով շնորհակալություն հայտնեց։

ՎԵԼԻԿԱՅԱ ԳԵՏԻ ԱՆՑՈՒՄԸ

Ռազմաճակատի զորքերի առջև խնդիր էր դրված ազատագրել Օստրով քաղաքը։

Օստրովը շատ ավելի ուժեղ ամրացված էր հարավից։ Մեծ խորությամբ պատրաստված պաշտպանության գիծը ֆաշիստները «Պանտերայի գիծ» էին անվանում։ Նրանց մտքով երբեք չէր էլ անցնում այն բանը, թե սովետական զորքերը երբևիցե կարող են հաղթահարել այդ գիրքերը։ Պաշտպանական կառույցները սկսվում էին Պսկովյան լճից, Պսկովից և Օստրովից դեպի արևվելք, ըստ որում լայնորեն օգտագործվել էին այս տեղանքում հոսող բազմաթիվ գետերն ու գետակները, որոնց բարձրադիր ափերը մեծ խոչընդոտ էին հանդիսանում տանկերի առաջխաղացման համար։ Էլ ավելի ամուր էր դարձնում գերմանական պաշտպանագիծը այդ տեղանքով հոսող Վելիկայա գետը։

Այդաբացին սկսվեց հրետանային նախապատրաստությունը։ Գետինը դողում էր հարյուրավոր հրանոթներից արձակվող համազարկերից։ Հրետանային կրակի տակ էին առնված հակառակորդի պաշտպանության առաջին գիծը և նրա թիկունքային զորամասերը։ Շուտով ջինջ երկնքում երևացին մեր կարմրաստղ սավառնակները։ Հրետանային հարվածները խաչակնքվեցին օդային ուժեղ ռմբակոծությամբ։

Երբ ավարտվեց թշնամու առաջավոր գծի, ինչպես ռազմաճակատում էին ասում՝ «մշակումը», հարևան զորքերի հետ միատեղ խրամատներից ու թաքստոցներից դուրս ցատկեցին նաև գեներալ Կարապետյանի հրամանատարության տակ գտնվող զորամասերը։

Դիվիզիային առաջադրված էր ռազմաճակատի այդ հատվածում մի գունդ անցկացնել թշնամու թիկունքը, այնտեղ խուճապ առաջացնելու նպատակով։

Անհրաժեշտ էր կազմակերպել Վելիկայա գետի անցումը։ Բայց ինչպե՞ս։ Չէ՞ որ գետը անցնելու համար անհրաժեշտ են լաստանավեր, տախտակամածներ և այլ հարմարանքներ։ Իսկ միավորման տրամադրության

տակ այդ պահին նման հարմարանքներ չկային։ Ուստի պետք էր գործի դնել զինվորական հնարամտությունն ու նախաձեռնությունը։ Գետանցը կազմակերպել ձեռքի տակ ունեցած միջոցներով։

Կարապետյանի հիշողության մեջ դեռևս թարմ էր երկու տարի առաջ Կարատայակի համար մղված մարտերում կազմակերպված Դոնի անցումը։ Այդ փորձը նա օգտագործեց նաև այս օպերացիայում։

Զորամասերի հրամանատարներին բացատրելով մարտական առաջադրանքը, գեներալը միաժամանակ ասաց, թե ինչ պետք է անել, որպեսզի գետանցը հաջող կազմակերպվի։

Հերոս հետախույզները և ջանասեր սակրավորները գործի անցան։ Առաջինները պետք է տախտակ ու այլ հարմարանքներ ճարեին, իսկ մյուսները՝ ցուցադրեին իրենց շինարարական վարպետությունը։

Սկսվեց ռազմի ժրաջան աշխատանքը։ Իսկույն ճարվեցին թե՛ տախտակներ և թե՛ դերաններ։ Խիզախ հետախույզները, չգիտես որտեղից, անգամ մակույկներ ձեռք բերեցին։

Ռուս, ղազախ, վրացի, հայ, ադրբեջանցի, բելոռուս, ուկրաինացի՝ սոցիալիստական աշխատանքում եղբայրացած, ռազմի դաշտում ավելի սերտ բարեկամացած մարդկանց կողմից ստեղծվեց այն բոլոր հարմարանքը, որ լիովին ապահովեց Վելիկայա գետի հաջող անցումը։

Օգտագործելով հասարակ, բայց գետանցը կազմակերպելու համար միանգամայն պիտանի միջոցները և ձկնորսական մի քանի մակույկներ, դրանցից մեկը հաջողությամբ փոխադրվեց գետի արևմտյան ափը ու թիկունքից հարվածեց թշնամուն։ Այդ ինքնագործ միջոցներով սովետական զինվորներին հաջողվեց թշնամու թիկունքը փոխադրել ոչ միայն հետևազորը և համեմա-

տարբեր թեթև քաշ ու փոքր ծավալ ունեցող սպառազի-
նությունը, այլև հրետանին ու ականանետները։

Որոշ ժամանակ անց գետի արևմտյան ափը անցան
ևս մի քանի զորամասեր ու այստեղ մի ընդհանուր
բռունցք կազմած ծավալեցին հարձակումը։

Իրենց պաշտպանության մեջ սեպված Սովետա-
կան Բանակի առաջավոր զորամասերը մեկուսացնելու և
նրա առաջընթացը արգելակելու նպատակով, հիտլերա-
կանները մարտի հանեցին «ֆերդինանդները», ինչպես
նաև բաղմաթիվ ծանր ու միջակ այլ տանկեր։ Նրանք
ուզում էին ամրապնդվել նոր բնագծում, իսկ հետո հա-
կագրոհի անցնել։ Սակայն հիմնական բնագծերից դուրս
շպրտված և արյունաքամ արված ֆաշիստների իղձերը
չիրականացան։ Սովետական զորամասերը մի ընդհա-
նուր շղթա կազմած, սրընթացորեն խորանում էին թըշ-
նամու պաշտպանության մեջ։ Օստրովն արդեն գտնվում
էր մեր զորամասերի կիսաշրջանակում։ Նախաղգալով
սպառնացող աղետը, հիտլերականները սկսեցին հրդե-
հել ու քարուքանդ անել քաղաքի խոշորագույն շենքերը,
փոստը, հեռագրատունը, իսկ դրանց թվում նաև ռազ-
մական նշանակություն ունեցող բոլոր կառույցները։

Իրիկնագեմին ծիրանագույն հրացոլքով պատեց
ամբողջ երկնակամարը։ Հրդեհները քանի գնում, այն-
քան ավելի ուժեղանում էին։ Մերոնք շտապում էին։
Անհրաժեշտ էր որքան հնարավոր էր շուտ ծնկաչոք անել
գերմանացիներին, փրկել քաղաքն ավերումից, իսկ
բնակչությանը՝ հիտլերականների լծից։

Հերոսաբար ու անձնվեր էին մարտնչում գեներալ
Կարապետյանի դիվիզիայի ռազմիկները։ Չորս օր և
չորս գիշեր անընդհատ նրանք գտնվում էին դաժան
կռիվներում։ Տասնյակ հերոս ռազմիկներ իրենց կյանքը
զոհաբերեցին ռուսական հնագույն քաղաք Օստրովի
ազատագրման մարտերում։ Չնայած գերմանացիների

կատարի դիմադրությանը, Մերձբալթյան 3-րդ ռազմաճակատի զորքերը ավելի ու ավելի էին նեղում օղակի մեջ առնված գերմանացիներին։ Հուլիսի 21-ին մերոնք գրոհով տիրեցին Օստրով քաղաքին։ Զորաօրյա հարձակողական ծանր գոտեմարտը պսակվեց փայլուն հաղթանակով։

1944 թվականի հուլիսի 21-ին հատուկ հրաման արձակվեց, որում Օստրով քաղաքի ազատագրմանը մասնակցած միավորումների թվում, որպես աչքի ընկնող զորամաս, նշված էր նաև գեներալ-մայոր Կարապետյանի դիվիզիան և ներկայացված էր «Օստրովյան» անվանակոչմանը։ Օստրով քաղաքի համար մարտնչած հարյուրավոր հերոս ռազմիկներ ներկայացվեցին կառավարական պարգևների։

Գվարդիայի գեներալ-մայոր Կարապետյանը պարգևատրվեց Կարմիր Դրոշի երկրորդ շքանշանով։

ՏԱՐՏՈՒԻ ԱԶԱՏԱԳՐՈՒՄԸ

Մի փոքր հանգստանալուց և համալրվելուց հետո, Կարապետյանի միավորման անձնակազմը նորից կանգնեց հայրենի երկրի ազատության համար մարտնչող զորագնդերի շարքերում։

Այս անգամ դիվիզիային առաջադրված էր ակտիվ մասնակցություն ցույց տալ էստոնական ՍՍՌ Տարտու (Դորպատ) քաղաքի ազատագրման մարտերին։

Պատերազմի հենց առաջին օրերին Տարտուն ընկել էր գերմանացիների ձեռքը և երկար ժամանակ գտնվում էր ֆաշիստական լծի տակ։ Հիտլերականները իրենց հրեշային չարագործություններով արնաքամ էին արել քաղաքի բնակչությանը։ Այն վերածվել էր մի մեռյալ բնակավայրի։ Հաղարավոր էստոնացիներ գտնվում էին

համակենտրոնացման ճամբարներում, շատերը տարվել էին արևմուտք տաժանակիր աշխատանքի։ Քաղաքից դուրս գտնվող հակատանկային փոսերում սովետական զորամասերը հայտնաբերեցին մարդկային դիակների բազմաթիվ կույտեր։ Ովքե՞ր էին դրանք, այդ անմեղ զոհերը։ Դրանք սովետական քաղաքացիներ էին, որոնք չէին ցանկացել դավաճանել իրենց Հայրենիքին, որոնք հրաժարվել էին գերմանացիներին հլու հպատակ դառնալուց։

Գտնվելով գետի Ռիգա տանող երկաթգծային մայրուղիների վրա, Տարտուն գերմանացիների կողմից վիր էր ածված պաշտպանության ուժեղ հանգույցի։ Նրանք զգում էին, որ Տարտուի հանձնումը շատ ավելի բարենպաստ պայմաններ կստեղծի սովետական հարձակվող զորքերի համար Մերձբալթիկայում և ամեն կերպ ջանում էին իրենց ձեռքից բաց չթողնել այն։ Հիտլերականները անընդհատ ռմբակոծում և գնդակոծում էին մեր զորքերի դիրքերը։ Նրանք փորձում էին զսպել մեր զորքերի հաղթական առաջընթացը։ Գոտեմարտը ավելի ու ավելի արյունահեղ էր դառնում։ Բայց սովետական զորամասերը, իսկ նրանց շարքում նաև գեներալ Կարապետյանի զորագնդերը, համառորեն շարունակում էին հարձակվել։

Տարտուի համար մղվող այդ կատաղի մարտերում վիրավորվեց դիվիզիայի գնդերից մեկի հրամանատար, խիզախ ռազմիկ փոխգնդապետ Կլիմենկոն։ Հանուն Հայրենիքի ազատության ու անկախության այստեղ զոհվեցին համարձակ հետախույզ Տոնականյանը, կապավոր Դուտկոն, դասակի հրամանատար լեյտենանտ Գավրիլովը, սակրավոր Փերինաշվիլին և ուրիշ ռազմիկներ։ Սակայն Կոմունիստական պարտիայի վեհ գործին, զինվորական երդմանը հավատարիմ սովետական ռազմիկները չէին հուսահատվում։ Նրանք ավելի խորն ատելու-

թյամբ էին լցվում դեպի թշնամին և հաջողությամբ կատարելով մարտական խնդիրը, համարձակորեն առաջ էին շարժվում։

Թեժ մարտեր ծավալվեցին քաղաքի մատույցներում։ Ճեղքելով գերմանացիների պաշտպանագծերը, մեր զորամասերը շեշտակի հարվածով թափանցեցին քաղաք։ Թշնամին հարկադրված եղավ ծանր մարտերի բռնվել սովետական առաջավոր զորամասերի հետ։ Քաղաքի արվարձաններում և նրա հարավ-արևմտյան ծայրամասերում մղվող մարտերում առանձնապես աչքի ընկան գեներալ Կարապետյանի միավորման ռազմիկները։ Հաղթահարելով թշնամու կատաղի դիմադրությունը, նրանք զրոհում էին բաղմահարկ շենքերում, նկուղներում և ձեղնահարկերում թաքնված գերմանացիների վրա, հօդս ցնդեցնում նրանց կրակակետերը։ Քաջակորով մարտիկները հաջողությամբ շրջապատում էին շրջանաձև պաշտպանության համար նախապատրաստված առանձին տները և թշնամուն ստիպում անձնատուր լինել։

Քաղաքի շենքերից մեկում ամրապնդված գերմանական ինքնաձիգին մի վաշտ համառ կերպով դիմադրում էր։ Այդ շենքը շրջապատել էին գվարդիայի մայոր Վասիլևի դումարտակի զինվորները։ Նրանք հիտլերականներին առաջարկեցին զենքը վայր դնել։ Հիտլերականները մերժեցին այդ առաջարկը և շարունակում էին կրակ վարել պատուհաններում դրած ու տանիքներ բարձրացրած գնդացիրներից։

Կարապետյանի հրամանատարական կետը, որը գտնվում էր հարևան փողոցի տներից մեկում, այդ մասին տեղեկացնելու եկավ մի կապավոր։

— Ընկեր գվարդիայի գեներալ,— զեկուցեց կապավորը,— մեր դումարտակի հրամանատարը որոշել է պայթեցնել այն տունը, որում գտնվող հիտլերականները

Հրաժարվում են զենքը վայր դնելուց։ Այդ զենքը խանգարում է մեր հետագա առաջխաղացմանը։ Գումարտակի հրամանատարը սպասում է ձեր որոշմանը։

— Հաղորդեցեք մայոր Վասիլևին, որ նա գործի այնպես, ինչպես սովորեցնում էր մեզ ռուսական հանճարեղ գրող Մաքսիմ Գորկին, հասկացա՞ք։

— Հասկացա, ընկեր գեներալ։ Եթե թշնամին անձնատուր չի լինում, նրան ոչնչացնում են։ Ուրեմն պայթեցնե՞նք տունը...

— Այո, պայթեցրեք,— հաստատեց գեներալը։

Մայոր Վասիլևը անմիջապես գործի դրեց իր գումարտակի սակրավորներին։ Շենքը պայթեցվեց։

Ժամ առ ժամ, րոպե առ րոպե քաղաքի բոլոր ծայրամասերում ավելի ու ավելի էին թեժանում մարտական գործողությունները։ Սովետական զորամասերի ճնշումը քանի գնում, այնքան ուժեղանում էր։ Ֆաշիստները այլևս չկարողացան դիմանալ մեր զորքերի հարվածներին։ 1944 թվականի օգոստոսի 25-ին Տարտու քաղաքի վրա նորից ծածանվեց Սովետական դրոշը։

Նույն օրը, երեկոյան, ռադիոն ամբողջ աշխարհով մեկ հաղորդեց Տարտուի գրավման ուրախալի լուրը։

Ի նշանավորումն ձեռք բերած հաղթանակի, մեր Հայրենիքի մայրաքաղաք Մոսկվան նորից սալյուտ տվեց 224 հրանոթից արձակված հրետանային քսան համազարկով։

Տարտուի ազատագրմանը մասնակցած հարյուրավոր ռազմիկներ արժանացան կառավարական պարգևների։ Գեներալ-մայոր Կարապետյանի կուրծքը զարդարվեց Կարմիր Դրոշի երրորդ շքանշանով։

Հենց այդ օրերին էլ Կարապետյանի դիվիզիայում գտնվող սկանակ պոետ Ալեքսանդր Լիսինը հորինեց Օստրովյան Կարմիր Դրոշի շքանշանակիր հրաձգային

դիվիզիային նվիրված երգ, որը ավարտվում է հետևյալ տողերով.

Будут снова бои,
На знамена свои
Новых подвигов имя запишем.
Будем так воевать,
Чтобы Родина-мать
Нашу поступь победную слышала.

Այդ երգը իսկույն տարածվեց դիվիզիայի բոլոր ստորաբաժանումներում։ Օստրովյան Կարմրադրոշ դիվիզիայի հերոս ռազմիկները մեծ սիրով էին գովերգում իրենց միավորման մարտական փառքը։

ԴԵՊԻ ՌԻԳԱ.

Վրա հասան աշնանային սառնաշունչ օրերը։ Դեղնագույն տարալ հագան անտառներն ու դաշտերը։ Ավելի հաճախ սկսվեցին տեղալ հորդառատ անձրևները։

Մերձբալթյան առաջին, երկրորդ և երրորդ ռազմաճակատներում զորամասերի խոշոր վերախմբավորում էր տեղի ունենում։ Այստեղ պատրաստվում էր թշնամուն ջախջախելու միասնական, խոր մտածված և հաջողությամբ իրականացված պլանի բաղկացուցիչ մասը կազմող ութերորդ հարվածը, որի նպատակն էր Սովետական Մերձբալթիկան լիովին մաքրել ֆաշիստական զավթիչներից։

Կարապետյանի դիվիզիան առաջադրանք ստացավ շարժվել Ռիգայի ուղղությամբ և անմիջական մասնակցություն ցույց տալ Լատվիական Սովետական Սոցիալիստական Հանրապետության մայրաքաղաքի ազատագրմանը։

Հերոսաբար հաղթահարելով թշնամու հենակետերը, սովետական հարձակվող զորքերը ընդհուպ մոտեցան գերմանացիների առաջակողին։

Հակառակորդի պաշտպանագիծը բաղկացած էր խրամատների խիտ ցանցից։ Նրանց միջև ընկած տարածությունը ամբողջովին ականապատված էր։

Այդ օրերին գեներալ-մայոր Կարապետյանի դիվիզիայի խիզախ հետախույզները մի քանի «լեզու» բերեցին, որոնք պատմում էին այն մասին, թե Ռիգայի պաշտպանությունն ամրապնդող այդ արտաքին պատնեշը իրենց մոտ ստացել էր պաշտպանության «ձմեռային» բնագիծ անունը։ Որ Հիտլերը իր զինվորներին ու սպաներին հրամայել է ոչ մի քայլ չնահանջել, ոչ մի դեպքում ձեռքից բաց չթողնել Ռիգան։

Հրետանային երկարատև կրակից հետո, որը տակն ու վրա արեց թշնամու պաշտպանագիծը, տանկերի և ինքնընթաց հրանոթների ուղեկցությամբ մարտի նետվեցին հետևակային զորամասերը։ Թշնամու պաշտպանության մեջ ստեղծված ճեղքվածքը լայնացնելու և խորացնելու համար սովետական մյուս զորամասերի հետ միասին մարտ մտան նաև գեներալ Կարապետյանի զորադնդերը։

Ջրային արգելքները հաղթահարելու մեծ փորձը գեներալ Կարապետյանի ստորաբաժանումներին հնարավորություն տվեց սրընթաց հարվածով տիրել Գաույա գետի ստորին հոսանքում եղած գետանցները։ Գերմանացիների վրա ուղղված հրացանա-գնդացրային կրակի ուժեղ տարափի աջակցությամբ միավորման գնդերը և նրանց հարևան զորամասերը հաջողությամբ անցան գետն ու շարունակեցին հետապնդել խուճապի մատնված թշնամուն, թույլ չտալով, որ նա ուշքի գա։

Բայց ահա հարձակվող գնդերի առաջ ծառացավ հակառակորդի մի ուժեղ խմբավորում։ Սրանք կատաղի

դիմադրություն էին ցույց տալիս։ Մայոր Սաֆրոնովի դումարտակի մարտիկները, որոնք գտնվում էին առաջավոր շարքերում, ձեռնամարտի բռնվեցին թշնամու զինվորների հետ։ Նրանք թափանցեցին գերմանացիների խրամատները և սկսեցին ոչնչացնել ֆաշիստներին։ Շուտով հիտլերականների հետ ձեռնամարտ սկսեցին նաև մյուս ստորաբաժանումների ռազմիկները։ Իսկ դրնդերից մեկը հաջող շրջանց մաններ կատարելով, անցավ հիտլերականների այդ խմբավորման թիկունքը։

Մարսափելով շրջապատման վտանգից, հակառակորդի զինվորներից շատերը թողնում էին իրենց դիրքերն ու փախչում դեպի մոտակա անտառները, իսկ ոմանք էլ սպիտակ դրոշ էին բարձրացնում ու գերի հանձնվում։

Մեր զորամասերը որքան ավելի էին մոտենում Ռիգային, այնքան ավելի էր ուժեղանում գերմանացիների դիմադրությունը։ Միավորման գնդերը հարկադրված եղան խրամատավորվել մի գերիշխող բարձունքի մոտերքում, որից հակառակորդը ուժեղ կրակ էր վարում։ Հարձակման տեմպը չթուլացնելու և հարևան զորամասերից ետ չմնալու համար Կարապետյանը որոշում ընդունեց շրջանցել այդ բարձունքը։

Բարձունքի աջ կողմում ծառախիտ անտառ էր ձգվում։ Կարապետյանը հրամայեց մի ուժեղացված գրոհային խումբ կազմել, և աննկատ, անտառի միջով թշնամու թիկունքն ուղարկել։ Այն ժամանակ, երբ գրոհային խումբը ուղղվեց դեպի թշնամու թիկունքը, մյուս ստորաբաժանումները ավելի ուժեղացրին իրենց ճակատային հարվածը։ Մի գրոհային խումբ էլ ուղղվեց դեպի բարձունքի ձախ կողմը։ Բարձունքը առնվեց կիսաշրջանակի մեջ։ Մերոնց ճակատային հարվածները դեռ շարունակվում էին, երբ գրոհային խմբի գլուխն անցած գվարդիայի կապիտան Սեմյոնովը ռադիոյով հաղորդեց.

որ իրենք արդեն դուրս են եկել թշնամու թիկունքը ու պատրաստ են թիկունքից հարձակվելուն։

Կարապետյանը հրամայեց զրոհել։ Դա շփոթության մեջ գցեց գերմանացիներին։ Իրենց թիկունքում նկատելով սովետական զինվորներին, նրանք կարծեցին, որ արդեն շրջապատվել են և անձնատուր եղան։ Հենց այստեղ էլ մեր զինվորները ապանված հիտլերականներից մեկի գրպանում մի նամակ գտան, որում գրված էր.

«Ռուսները չորս կողմից սեղմում են։ Մենք դեռ շարունակում ենք նահանջել և ավելի ու ավելի ենք մոտենում բուն Գերմանիային։ Դրությունը ծանր է։ Երեկ ապանվեց Հանսը։ Շուտով դուցե հս էլ դնամ այն աշխարհը։ Շատ եմ ցավում, որ նորից չենք կարողանա տեսնվել։ Բայց ինչ արած։ Մեր բախտն այդպես է։ Աստված գիտե թե դեռ ինչեր է գալու մեր գլխին»։

Գերմանական մի ուրիշ զինվորի մոտ գտնված նամակում ասվում էր.

«Երեկ ինձ և շատ ուրիշների ժամկետից շուտ դուրս գրեցին գոսպիտալից և դեպի առաջավոր գիծ ուղարկեցին։ Վերքս դեռ կարդին չի լավացել, բայց ստիպված եմ դարձյալ հրացան վերցնելու ձեռքս։ Մենք հիմա գտնվում ենք մի բարձունքի վրա։ Տեղերս ապահով է։ Այստեղից դժվար թե ռուսներին հաջողվի քշել մեզ»։

* * *

Մեկը մյուսին հաջորդելով շարքից դուրս էին գալիս գերմանական պաշտպանադծերը։ Նրանք մնացին մեր զորամասերի խոր թիկունքում։

Այսպիսով, գերմանական զավթիչների բոլոր փորձերը՝ շահել ժամանակը, մի կերպ կանգնեցնել մեր զորքերի հարձակումը, մինչև որ վրա հասնի լատվիական անձրևառատ ու մառախլապատ ձմեռը և անանցանելի

դառնան ճահճոտ մարդերը,— ոչ մի արդյունք չտվեցին։ 2-րդ և 3-րդ Մերձբալթյան ռազմաճակատների զորքերը շարունակում էին կենտրոնանալ Ռիգայի շուրջը։ Առաջավոր զորամասերը թե՛ արևելքից և թե՛ հյուսիսից արդեն ընդհուպ մոտեցել էին քաղաքին։

Գեներալ Կարապետյանի դիվիզիան գտնվում էր հյուսիսից հարձակվող սովետական զորամասերի շարքերում։ Խորտակելով հիտլերականների դիմադրությունը, նրա գնդերը մարտերով առաջ էին շարժվում։

Զգալով իրենց մոտալուտ պարտությունը, հիտլերականները հրդեհում էին քաղաքի շենքերը։ Նրանք պայթեցրել էին ջրմուղը, էլեկտրականը, Արևմտյան Դվինայի վրայով անցնող երկաթուղագծային և մարդատար կամուրջները։ Թեժ կրակի բոցերով էր կլանված «Հոտ» հյուրանոցի շենքը։ Ռիգան պարուրված էր ծխի ու կրակի մեջ։ Ռիգան փրկելու էին շտապում, որպես հոգատար մայրը իր զավակին՝ Սովետական փառապանծ Բանակի հերոս ռազմիկները։

Եվ ահա, հաղթահարելով հակատանկային բոլոր արգելքները, մեր խիզախ տանկիստները սրընթաց մտան քաղաք։ Տանկիստների հետ միասին քաղաք մտան նաև հետևակային զորամասերը։ Ծավալվեցին փողոցային մարտեր։

Կարապետյանի հրամանատարությամբ մարտնչող ռազմիկները դարձյալ արիության, հերոսության և ռազմական բարձր վարպետության սքանչելի օրինակներ ցուցադրեցին։

Հոկտեմբերի 13-ի արշալույսին սովետական ռազմիկները գրավեցին քաղաքի նավահանգիստը։ Նույն օրվա վերջում Ռիգան ամբողջովին մաքրվեց հիտլերականներից։

Սովետական Լատվիայի մայրաքաղաքը՝ ռազմածովային կարևոր բազան, գերմանացիների պաշտպա-

նության հզորագույն հանդույցը Մերձբալթիկայում, անցավ սովետական զորքերի ձեռքը։ Այդ մարտերում միայն գեներալ Կարապետյանի դնդերը, որպես ռազմաավար, վերցրին 30 հրանոթ, 50-ից ավելի գնդացիր, մոտ 1.000 հրացան, մեծ քանակությամբ ականներ և տասնյակ ավտոմեքենաներ։

Հետապնդելով նահանջող հակառակորդին, Սովետական Բանակի զորամասերը Տոկումսի և Լիբավայի միջև ոքցանի մեջ առան ֆաշիստական 30 դիվիզիա և նրանց ոչնչացնելու մարտեր ծավալեցին։

ԲԵՌԼԻՆԻ ԴՐՈՀԸ

Բեռլինի համար մղված մարտերը, որոնք սկիզբ էին առել դեռ Ստալինգրադի մատույցներում և Կովկասյան նախալեռներում, հանդիսացան գվարդիայի գեներալ-մայոր Կարապետյանի ռազմի դործողությունների՝ եզրափակիչ ու վեհապանծ ճակատամարտերից մեկը։

Սովետական զորամասերը, ինչպես և գվարդիայի գեներալ-մայոր Կարապետյանի զորագնդերը, որոնք 1945 թվականի փետրվարին թափանցեցին ֆաշիստական Գերմանիայի սահմանները, արդեն օժտված էին հարձակողական մարտեր վարելու հարուստ փորձով։ Նրանք անցել էին տասնյակ դաժան ճակատամարտերի կրակի ու բոցի միջով։

* * *

Բարակ անձրև էր մաղում։ Պոմերանիան ձմռան խոնավ ու տխուր եղանակով դիմավորեց Սովետական Բանակի ռազմիկներին։

Գերմանացիները փորձում էին կանգնեցնել հարձակվող զորամասերի առաջխաղացումը և չթողնել,

որպեսզի սովետական զորքերը թափանցեն Գերմանիայի խորքերը։ Օրինակ, Նոյվեդել քաղաքը իրենց ձեռքում պահելու համար թշնամին մի քանի անգամ հակագրոհի անցավ։ Քաղաքի մատույցներն այնպիսի խտությամբ էին ականապատված, որ յուրաքանչյուր անզգույշ քայլ կարող էր մահաբեր լինել։ Կարապետյանի զորամասերը շրջանցեցին այդ քաղաքը և թիկունքային հարվածով գրավեցին այն։

Լարված ու կատաղի բնույթ էին կրում Դրամբուրգ քաղաքի համար մղվող մարտերը։ Այդ մարտերում իրենց հերոսական սխրագործությամբ աչքի ընկան Սովետական Միության Հերոս մայոր Նովոսելցևի դումարտակի ռազմիկները։

Գնդացրային և ականանետային ուժեղ կրակի աջակցությամբ նրանք արընթաց հարվածով դուրս եկան քաղաքի արվարձանները և սկսեցին քաղաքի գրոհը։

Փողոցային կարճատև մարտերից հետո մայոր Նովոսելցևի դումարտակը լիովին տիրեց քաղաքին։

Գերի վերցրած գերմանական զինվորներից բացի, մերոնք քաղաքում չգտան ոչ մի կենդանի մարդ, ոչ մի տեղական բնակիչ։ Գերմանական բնակչությունը, ահաբեկված ֆաշիստական ստահոդ պրոպագանդայով, փախչում էր սովետական զորքերից, թողնելով ամբողջ ունեցվածքը։

Քաղաքներում և գյուղերում տիրում էր բառսային դրություն։

Բուն Գերմանիայից կտրված հիտլերյան զորքերի Պոմերանյան խմբավորումը անկանոն կերպով շարժվում էր դեպի ծովափ, որպեսզի ծովով դեպի արևմուտք փոխադրվեր։ Բայց ավաղ։ Նրանց բախտն արդեն կանխորոշված էր։ Ալեկոծված Բալթիկ ծովը ոչ մի փրկություն չէր խոստանում նրանց։

Ռազմաճակատի այդ հատվածում գերմանացիներին հասցվող հարվածը քանի գնում այնքան ավելի ուժեղանում էր։ Մեկը մյուսի ետևից պարտվում էին գերմանական քաղաքները։ Դրամբուրգից հետո ընկավ և Լաբեսը։ Շուտով պարտվեցին Կնուրուշը և Գրոս-Ցուստինը։

Սովետական Միության Հերոս Նովոսելցևի դումարտակը առաջինը դուրս եկավ ծովափ, նրան հետևեցին նաև դիվիզիայի մյուս ստորաբաժանումները։ Ծովափի այս հատվածում ընկած էին հիտլերականների դիակները, ջարդված ավտոմեքենաներ, սայլեր, հրանոթներ, գնդացիրներ և ռազմական այլ տեխնիկա։ Ծովափ էին հասել նաև գերմանական քաղաքացիական բնակչության շատ ընտանիքներ։

...Ահա մի գերմանացու ընտանիք կուչ է եկել խարույկի շուրջը ու տաքանում է նրա աղոտ կրակով։ Նրանց սայլը հասել է ծովափին և այլևս առաջանալ չի կարող։

— Այդ ո՞ւր եք գնում «հաղթողներ»,— ռազմիկներից մեկը դիմեց խարույկի մոտ կուչ եկած գերմանացուն։

— Էլ ո՞ւր պիտի գնանք,— դողդոջուն ձայնով պատասխանեց հուսակտուր գերմանացին.— ծովը կըտրեց մեր ճամբան։ Մեզ ասում էին, որ դուք կենդանի չեք թողնի և ոչ մի գերմանացու, որ դուք սրի կմատնեք բոլորիս։ Դրա համար էլ փախուստի դիմեցինք։ Մենք Դրամբուրգից ենք։ Խնդրում եմ ճիշտն ասեք, հո չե՞ք սպանի մեզ...

— Մենք խաղաղ բնակչության դեմ կռիվ չենք մղում,— պատասխանեց զինվորը,— կարող եք ետ դառնալ ձեր տունը։ Մեր բանակի ռազմիկները ոչնչացնում են միայն նրանց, որոնք զենքը վայր չեն դնում և շարունակում են դիմադրել։

Գերմանացին ապշեց։ Նա կարծեց, թե հանաք է անում ռուս զինվորը։ Բայց հետո, երբ նրանց կողքով

անցյան միավորման մյուս ստորաբաժանումները, իսկ մի բեղավոր զինվոր անդամ շաքար տվեց նրա կիսաքաղց մանկիկին, նա նոր զգաց, թե որքան ստահոդ և զրպարտիչ էր Սովետական Բանակի հասցեին ուղղված գերմանական պրոպագանդան։

Սովետական զորքերը գլխովին ջախջախեցին գերմանացիների Պոմերանյան խմբավորումը։ Այդ օպերացիայում նշանակալից դեր խաղաց նաև գեներալ Կարապետյանի միավորումը։

* * *

...Օդերը հիտլերյան հրոսակախմբերի պաշտպանության վերջին և ամենահուսալի բնագիծն էր։

Ֆաշիստական հրամանատարությունը օգտագործել էր ռազմական տեխնիկայի բոլոր միջոցները, որպեսզի անանցանելի դարձնի այդ հորդառատ գետը։

Դեպի Օդերը տանող խճուղիների վրա գտնվող յուրաքանչյուր բնակավայր հենակետի էր վերածվել։ Փողոցներում կառուցված էին բարիկադներ։

Հաղթահարելով գերմանացիների կողմից ստեղծված ամրությունները, Կարապետյանի միավորումը, հարևան զորամասերի հետ սերտ փոխգործողությամբ, դուրս եկավ Օդերի ափը և անմիջապես ձեռնամուխ եղավ գետանցի կազմակերպմանը։

Պետք է նշել, որ մինչև այժմ կատարած գետանցերից Օդերի անցումը ամենադժվարինն էր։ Ֆաշիստները ընդհատ կրակի տակ էին պահում գետի վրայով գցած ամեն մի կամուրջ։ Այստեղ առանձնահատուկ վարպետություն ու խիզախություն ցուցաբերեցին մայոր Իվանցովի սակրավորները։ Մյուս ստորաբաժանումների ռազմիկների հետ միասին նրանք կարճ ժամանակամիջոցում պոնտոնային կամուրջ դցեցին։

Սկսվեց դետանցը։

Հիտլերականների կրակով կամուրջին հասցված ամեն մի վնասվածք սակրավորներն իսկույն վերացնում էին և իրենց ջանասեր աշխատանքով ապահովում դիվիզիայի անձնակազմի փոխադրումը գետի մյուս ափը։

Առաջին երկու օրը միայն գիշերվա պահին էր կատարվում դետանցը։ Բայց հետո, ժամանակ շահելու համար, կամուրջը շահագործվել սկսվեց նաև ցերեկով։ Մեկը մյուսի հետևից փոխադրվում էին թնդանոթները, ականանետերը և ինքնընթաց հրանոթները։ Հետևակային զորամասերից հետո դետն անցան զինամթերքով բեռնված ավտոները։

Չնայած գերմանացիների հրետանային անընդհատ կրակին և ռմբակոծություններին, դետանցը շարունակվում էր։ Կամուրջը տնքում էր ռազմի այդ հաղթական երթի ծանր բեռան տակ։

Մի քանի օր անց, դիվիզիայի ամբողջ անձնակազմն արդեն գտնվում էր գետի արևմտյան ափին։

Սկսվեցին Բեռլինի գրոհի նախապատրաստական աշխատանքները։

* * *

Ապրիլ ամիսն էր։ Եղանակները գնալով տաքանում էին, օրերը երկարում։

Գվարդիայի գեներալ-մայոր Կարապետյանի միավորումը, որն այն ժամանակ գործում էր 1-ին Բելոռուսական ռազմաճակատի կազմում, առաջադրանք ստացավ ամենաառջևում գտնվող զորասյուների թվում մասնակցել Բեռլինի գրոհին։ Ոգևորված դրանով, ռազմիկները սկսեցին ջանասիրաբար պատրաստվել գալիք մարտերին։ Հրաձիգներն ու հրետանավորները կարգի էին բերում իրենց զենքն ու հանդերձանքը, կապավորներն ու սակրավորները՝ իրենց տեխնիկան։

Հրամանատարական կազմը անցավ Բեռլինի հատակագծի ուսումնասիրմանը։

Դիվիզիայի շտաբի օպերատիվ աշխատողների հետ Բեռլինի հատակագիծը ուսումնասիրում էր նաև գեներալ Կարապետյանը։

Օր ու գիշեր չէին դադարում նախապատրաստական աշխատանքները։ Գեներալը ցերեկները պարապմունքներ էր անցկացնում շտաբային սպաների և միավորման անձնակազմի հետ։ Ստուգում էր նախապատրաստության ընթացքը, հրահանգներ ու ցուցումներ էր տալիս։ Իսկ երբ վրա էր հասնում երեկոն, նա մինչև արշալույս զբաղվում էր Բեռլինի հատակագծի ուսումնասիրությամբ, պլանավորում իր զորագնդերի առաջիկա գործողությունները։

— Մենք լարվածությամբ էինք պատրաստվում Բեռլինի դրոհին,— ասում է գեներալ Կարապետյանը։— Չնայած անցկացրած բազմաթիվ անքուն գիշերներին, հոգնածություն չէինք զգում։ Մեծ եռանդով էին գործում բոլորը։ Մեր աշխատանքը մի ակնթարթ անդամ դադարեցնել չէին կարող ո՛չ գերմանացիների հրետանային կրակը և ո՛չ էլ նրանց օդային հարձակումները։ Մեր ամբողջ անձնակազմը զգում էր, որ Բեռլինյան ճակատամարտը ծանր ու դաժան է լինելու, որ Բեռլինի անկումը հիտլերյան Գերմանիայի անկումն է, և դրա համար բազմապատկված ուժերով էր գործում։

1945 թվականի ապրիլի 14-ի լուսաբացին սկսվեց Բեռլինյան ճակատամարտը։

Օդերի արևմտյան ափերին ստեղծված պլացդարմներից խորտակիչ կրակ բացեցին սովետական հրետանավորները։ Հրետանային այդ չտեսնված ուժի հարձակմանը մասնակցում էին 41.600 հրանոթներ ու ականանետներ։ Ռազմադաշտը լուսավորված էր հազարավոր լուսարձակների աչք կուրացնող լույսով, որոնք հրետա-

նային հզոր կրակի հետ միասին ավելի մեծ սարսափ էին տարածում գերմանացիների վրա։

Շնամին գիտեր, որ սովետական զորքերը պատրաստվում էին վճռական հարձակման, որ նրանք շարժվում էին դեպի Բեռլին։ Բայց նա երբեք չէր սպասում այդպիսի կենտրոնացված հարվածի, այդպիսի հզոր ուժի։ Հավատալով Գեբելսի պրոպագանդային, նրանք կարծում էին, թե Կարմիր Բանակը վաղուց հյուծվել ու արյունաքամ է եղել, որ նա արդեն ընդունակ չէ ուժեղ հարվածներ հասցնելու և որ դարձյան ջրերը կկըտրեն սովետական զորքերի ուղին։ Սակայն հրետանային ս։տարափը հողմացրիվ արեց խաբված հիտլերականների այդ կարծիքը։ Նրանք դարձյալ զգացին Կարմիր Բանակի հարձակողական ուժը և նրանցից շատ շատերի համար դա վերջին տպավորությունը հանդիսացավ Սովետական Զինված Ուժերի հզորության և ռազմական վարպետության մասին։

Երբ դադարեց հրետանային կրակը, գրոհի բարձրացավ հետևակը։ Մարտ նետվեցին ավելի քան 6.300 տանկեր ու ինքնընթաց հրանոթներ։ Օդից հարվածել սկսեցին ինքնաթիռները։

Դեպի Բեռլին շարժվող ռազմիկների ոգևորությանը չափ ու սահման չկար։ Գեներալ Կարապետյանի դիվիզիան հարձակվում էր երրորդ հարվածային բանակի առաջին գորաշարքում։

Մի սիրտ, մի հոգի դարձած, ռուս մեծ ժողովրդի դյուցազն զավակների հետ կողք-կողքի, ուս-ուսի դեպի վճռական մարտի էին նետվում ուկրաինացիներն ու բելոռուսները, ուզբեկներն ու ղազախները, ադրբեջանցիներն ու վրացիները, թուրքմեններն ու տաջիկները, հայերն ու լատիշները և սովետական բազմազգ ժողովրդի շատ ուրիշ ազգությունների պատկանող զավակներ։ Նրանք մարտի էին նետվում Սովետական Հայրենիքի

պատվի, ազատության և անկախության համար, խաղաղասեր մարդկությանը ֆաշիստական գավթիչներից ազատագրելու համար։

Այդ պատմական օրերին ցնծագին հուզմունքով էր լցված Կարապետյանի դիվիզիայի շարքերում մարտնչող յուրաքանչյուր ռազմիկի սիրտը։ Մոռացության տալով քունն ու հանգիստը, նրանք գործում էին բազմապատկված եռանդով, սիրով ու պատրաստակամությամբ կատարում ամեն մի հրաման, յուրաքանչյուր առաջադրանք։

Ահաբեկված թշնամու դիմադրությունը քանի գնում, այնքան ավելի էր ուժեղանում։ Ֆաշիստները անընդհատ մարտադաշտ էին նետում թարմ ուժեր։ Դաժան մարտեր էին տեղի ունենում օդում։ Հակառակորդը գործի էր դրել իր ամենաուժեղ և օդային մարտերում լավ մարզված 6-րդ օդատորմիղը։ Նրանք ձգտում էին ոմբակոծել մեր թիկունքները, մշտական հարվածի տակ էին պահում կոմունիկացիաները։ Պատահում էին օրեր, երբ սովետական կործանիչները ստիպված էին լինում հարյուրից ավելի օդային գոտեմարտեր վարել։

Մահամերձ թշնամին կատաղի դիմադրություն էր ցույց տալիս։ Ճզմելով ֆաշիստական տեխնիկան ու կենդանի ուժը, Սովետական Բանակի ռազմիկները համարձակորեն առաջ էին շարժվում։

Գեներալ Կարապետյանը գտնվում էր դիվիզիայի առաջնագծում, փոխգնդապետ Կլիմենկոյի գնդում, և այնտեղից էլ ղեկավարում էր միավորման մարտական գործողությունները։

Ապրիլի 22-ին դիվիզիան հասել էր Բեռլինի արվարձանները, իսկ Սովետական Միության Հերոս՝ մայոր Նովոսելցևի գումարտակն արդեն փողոցային մարտեր էր մղում Բեռլինը պաշտպանող ֆոլկսշտուրմականների

դեմ։ Բեռլինի յուրաքանչյուր տունը, ամեն մի պատուհանը վերածված էին կրակակետերի։

Այստեղ գոյություն չուներ ռազմաճակատի մի ընդհանուր գիծ։ Այն պահին, երբ դիվիզիայի գրոհային խմբերը մարտեր էին վարում քաղաքի կենտրոնական թաղամասերում, նրանց թիկունքում քաղաքի արվարձաններում հրահրվում էին նոր մարտեր։ Դիվիզիայի գումակային ու տնտեսական ստորաբաժանումները ձեռնամարտ էին մղում ֆաշիստների ջլատված, բայց դեռ մարտ մղելու ընդունակ խմբավորումների դեմ։

Նման մարտերից մեկում աչքի ընկավ Ռուդենկոյի գումարտակի խոհարար Սուրիկովը։ Նա իր խոհանոցը կանգնեցրել էր մի տան մոտ և երկու մարտիկների օգնությամբ ճաշ էր պատրաստում։ Այդ պահին Սուրիկովը նկատեց, որ տան նկուղում ինչ որ մարդիկ կան։ Գերմանացիները նկուղի պատուհանից գնդացրային կրակ բաց արին։ Սուրիկովի հետ գործող ռազմիկներից մեկը վիրավորվեց։ Սուրիկովը կարգադրեց վիրավորված ընկերոջը տեղափոխել թաքստոց, իսկ ինքը մեկը-մյուսի ետևից երեք նռնակ նետեց նկուղում բուն դրած գերմանացիների վրա։ Գնդացիրը լռեց։

Արյունահեղ գոտեմարտ տեղի ունեցավ Բեռլինի պուրակներից մեկում, Հիվանդանոցի մոտ։ Այստեղ գերմանացիները հակագրոհի դիմեցին տանկերի աջակցությամբ։ Գեներալը հրետանավորներին հրամայեց ուղղակի նշանառությամբ ոչնչացնել գերմանական տանկերը։ Հրամանն իսկույն գործի վերածվեց։ Սերժանտ Տիխոնովի հաշվարկը ուղղակի նշանառության հանեց իր հրանոթը և հենց առաջին կրակով հրկիզեց գերմանական մեքենաներից մեկը։ Տանկերի դեմ մենամարտի դուրս եկան նաև հակատանկային հրացաններով զինված ռազմիկները։ Հիտլերականների հակագրոհը ձախողվեց։

Միավորման շտաբը արդեն հասել էր Բեռլինի հյուսիս-արևմտյան մասը և տեղադրվել Գերցբերգշտրասսե կոչվող փողոցի վրա գտնվող տներից մեկում։ Իսկ ինքը՝ գեներալը շտաբի օպերատիվ խմբի հետ հասել էր քաղաքի Ալեքսանդր Պլաց հրապարակը։ Մարտեր էին մղվում հրապարակը գրավելու համար։ Գծային կապը հաճախակի խախտվում էր։ Մարտական գործողությունները գեներալը ղեկավարում էր ռադիոկապի և կապավոր զինվորների միջոցով։ Գվարդիայի ավագ լեյտենանտ Վարդանյանի և կապավորներ Սամոխինի, Հասանովի, Արիստակեսյանի ու Պավլենկոյի ջանասեր գործունեության շնորհիվ, ռադիոկապը երբեք չէր ընդհատվում։

Մոլենդորֆ շտրասսեից գեներալին զեկուցում են, որ գնդի հրամանատար փոխգնդապետ Կլեմենտևը ծանր վիրավորված է։ Գեներալը գնդի շտաբի պետ մայոր Գորելովին հրամայում է փոխարինել նրան։ 24 տարին հազիվ լրացած երիտասարդ սպան իր վրա է վերցնում գնդի հրամանատարությունը և, հմտորեն ղեկավարելով փողոցային մարտերը, շուտով գրավում է փողոցի բոլոր կարևոր շենքերը։

Հաղթահարելով գերմանացիների դիմադրությունը, ճշտորեն կատարելով մարտական առաջադրանքը, Գորելովի գունդը առաջինը դուրս եկավ Շպրեյե գետի ափը։ Հորդառատ Վոլգայից, խաղաղ Դոնից մինչև Շպրեյե՝ ահա երիտասարդ սովետական սպայի մարտական ուղին։

* * *

Ալեքսանդր Պլաց հրապարակում շարունակվում էին արյունահեղ մարտերը։ Դարձյալ մարտադաշտ են նետվում գերմանական տանկեր, ավելի ակտիվորեն են գործում «ֆաուստայինները»։ Նորից ուղղակի նշանառու-

թյան են դրվում հրանոթները։ Սկսվում է մենամարտը տանկերի դեմ։

Այդ գոտեմարտում իր խիզախությամբ աչքի է ընկնում կոմերիտական Ալեքսանդր Ցիգանոկը։ Նա հենց գերմանացիներից խլած «Ֆաուստ» փամփուշտներով Ալեքսանդր Պլաց հրապարակի վրա դուրս եկող շենքի պատշգամբից հրկիզում է գերմանական երեք տանկ։

Ալեքսանդր Պլացը մաքրվում է գերմանացիներից։ Անհավասար մարտերում ցուցաբերած սխրագործության համար սերժանտ Ա. Ցիգանոկը ներկայացվում է Սովետական Միության Հերոսի բարձր կոչման։

«Ֆաուստ» փամփուշտների գործադրման Ալեքսանդր Ցիգանոկի փորձը անմիջապես տարածվում է դիվիզիայի մյուս ստորաբաժանումներում։ Սովետական ռազմիկները սկսում են թշնամուն հարվածել հենց իր զենքով։

Գտնվելով հարձակվող սովետական զորքերի պողպատե օղակում, հիտլերյան հրոսակախմբերի բեռլինյան կայազորը օրավուր հյուծվում ու ջլատվում էր։

Մարտերը սրընթաց էին և անդադար։ Մի գոտեմարտին անմիջապես հաջորդում էր մյուսը։ Հապաղել՝ նշանակում էր լքել ռազմի դաշտը, թույլ տալ, որ թշնամին ուշքի գա ու հակադրոհի անցնի։ Անհրաժեշտ էր լարել բոլոր ուժերը, հաղթահարել ամեն մի դժվարություն։ Ցուցաբերել ռազմական խորամանկություն, արիություն ու խիզախություն։ Իսկ այդ ամենը ընդունակ էին ցուցաբերելու Սովետական Բանակի ռազմիկները, Կոմունիստական պարտիայի կողմից դաստիարակված սովետական մարդիկ։

Այդ օրերին շատ լարված էր աշխատում գեներալը։ Նա ղեկավարում էր ոչ միայն դիվիզիայի ընդհանուր գործողությունները, այլ նաև մարտական առաջադրանքներ էր տալիս առանձին գումարտակների, դասակների և անգամ առանձին ռազմիկների։

Դժվար էր առանց ռազմագաշտը դիտելու մարտեր վարել, և ավելի ծանր, երբ բացակայում է ռազմաճակատի մի ընդհանուր գիծ։ Սակայն, ունենալով մարտական հարուստ փորձ, զվարդիայի գեներալ-մայոր Կարապետյանը հմտորեն էր ղեկավարում մարտական գործողությունները և պատվով կատարում վերադաս հրամանատարությունից ստացվող ամեն մի առաջադրանք։

Իրենց հայրենասիրական պարտքը, Հայրենիքին տված զինվորական երդումը փութաջանորեն ու անձնազոհ կերպով էին կատարում նաև միավորման բոլոր ռազմիկները։

Որպես հրամանատար, գեներալը ոչ միայն խստապահանջ էր, այլև հոգատար։ Անգամ մարտերի ամենալարված պայմաններում նա ժամանակ էր գտնում անձամբ զբաղվելու ռազմիկներին սննդով ապահովելու, վիրավորներին բժշկա-սանիտարական դումարտակ փոխադրելու և զինվորների կենցաղին վերաբերող այլ հարցերով։

— Մեր զինվորները քաջ մարդիկ են, համարձակ ու տոկուն,— ասում էր Կարապետյանը։ Նրանք կարող են սարեր շուռ տալ։ Սակայն նրանց մասին պետք է մշտապես հոգալ։ Պետք է սիրել նրանց հայրական սիրով։ Հոգատարությունը չպետք է սահմանափակվի միայն նրանով, որ զինվորներն ապահովվեն հյութառատ ու համեղ սննդով և հանդերձանքով։ Ո՛չ, դա դեռ բավական չէ։ Գլխավոր խնդիրը զինվորին մարտական գործը լավ սովորեցնելն է։ Բարձրացնել նրա մարտական վարպետությունը, նրա մեջ զարգացնել զինվորական խորամանկություն ցուցաբերելու հատկություններ, ձեռներեցություն և համարձակություն, նրանց դաստիարակել զգոնության և մշտական մարտական պատրաստության ոգով։ Յուրաքանչյուր ոպա պետք է իր ենթականերին դաստիարակի այնպես, որ թշնամու դեմ մղվող ամենա-

դաժան գոտեմարտում էլ նրանք հաղթող դուրս գան, արհամարհեն մահը։

* * *

1945 թվականի մայիսի 2-ին, ցերեկվա ժամը 15-ին Բեռլինը պարտվեց։

Գերմանական մայրաքաղաքի փողոցները լցվեցին դերի հանձնված հիտլերյան զինվորների երկար ու ձիգ շարաններով։ Նրանք շարժվում էին Ունտեր-դեն Լինդենով, Ֆրիդրիխ շտրասսեով, Ֆրանֆուրտեր ալեյով։ Յուրաքանչյուր զորասյան առջևից քայլում էին գերմանական պարտված գեներալները և սպաները։

Մեծ աշխուժություն էր տիրում արքայական հրապարակի վրա բարձրացող հսկայական մոխրագույն շենքի թե՛ մոտերքում և թե՛ ներսում։ Սա հիտլերյան ռայխստագն էր։ Հիտլերյան հորդաները այս շենքից էին հրաման ստացել 1941 թվականի հունիսի 22-ին ուխտադրժորեն հարձակվել Սովետական Միության վրա։ Այս մռայլ շենքից էին հրամաններ արձակվում սովետական մարդկանց խոշտանգելու և բնաջնջելու, սովետական գյուղերն ու քաղաքները սրի ու հրի մատնելու համար։ Այդ շենքի գլխավերևում այժմ փողփողում էր հաղթանակի դրոշը։ Այդ դրոշը բարձրացրել էին ռուս ռազմիկ Միխայիլ Եգորովը և վրաց զինվոր Մելիտոն Քանթարիան։ Այդ դրոշը Բեռլին էր հասցված բաղմաթիվ արյունահեղ ու դաժան գոտեմարտերի բովով։

1945 թվականի մայիսի 2-ը Սովետական Միության Զինված Ուժերի տարեգրության մեջ մտավ որպես նրա ամենափայլուն էջերից մեկը։ Այդ ցնծալի օրը նշվում է Գերագույն Գլխավոր Հրամանատարության հատուկ հրամանով, որում տասնյակ ռուս, ուկրաինացի, բելոռուս, վրացի և Սովետական Միության ուրիշ ժողովուրդ-

ների ծոցից դուրս եկած գեներալների շարքում նշված են նաև հայ գեներալներ Ս. Կարապետյանի, Ի. Գասպարյանի, Ն. Սաֆարյանի և Հ. Բաբաջանյանի անունները։

Մեր Հայրենիքի մայրաքաղաք Մոսկվան մայիսի 2-ին ժամը 23-ն անց 30 րոպեին այդ պատմական հաղթանակի պատվին, Հայրենիքի անունից, 324 հրանոթի 24 համազարկով սալյուտ է տալիս 1-ին Բելոռուսական և 1-ին Ուկրաինական ռազմաճակատների քաջարի զորքերին։

Բեռլինի համար մղված մարտերում Սովետական Զինված Ուժերի ռազմիկները, նրանց թվում նաև գեներալ Ս. Ի. Կարապետյանի հրամանատարության տակ գտնըված միավորման անձնակազմը, ցուցաբերեցին մասսայական հերոսություն, անձնազոհություն և ռազմական բարձր վարպետություն։ Հազարավոր սպաներ, սերժանտներ ու զինվորներ արժանացան Սովետական կառավարության բարձր պարգևների։ Կառավարական մի նոր պարգև՝ Սուվորովի 2-րդ աստիճանի շքանշան, ստացավ նաև գեներալ Կարապետյանը։

* * *

Մինչև իր կյանքի վերջին շունչը Ս. Ի. Կարապետյանը ուժ ու եռանդ չէր խնայում՝ ի փառս Սովետական Հայրենիքի և իր անխոնջ աշխատանքով վայելում էր բոլոր ծառայակիցների, մարտական ընկերների ու բարեկամների անկեղծ սերն ու հարգանքը։

Գվարդիայի գեներալ-մայոր Սերգեյ Իսահիչ Կարապետյանը վախճանվեց 1954 թվականի նոյեմբերի 9-ին՝ 55 տարեկան հասակում։

1920 թվականից գտնվելով ՍՄԿՊ շարքերում, Ս. Ի. Կարապետյանը մշտապես հավատարիմ ու նվիրված է

եղել Կոմունիստական պարտիայի վեհ գործին։ Նա ազնիվորեն էր կատարում սովետական հայրենասերի իր սրբազան պարտքը Հայրենիքի և ժողովրդի հանդեպ։ Նա Հայրենիքի հավատարիմ զավակն էր, անձնուրաց զինվորը։

* * *

Մեր հարազատ Կոմունիստական պարտիայի իմաստուն ղեկավարությամբ, մեր մարշալների, գեներալների և սպաների հմուտ հրամանատարությամբ Սովետական Զինված Ուժերը փայլուն հաղթանակներ ձեռք բերեցին Հայրենական Մեծ պատերազմում։ ՍՍՌ Միության Զինված Ուժերը վճռական դեր խաղացին նաև յապոնական իմպերիալիստների ջախջախման գործում։

Հակառակ ամերիկա-անգլիական իմպերիալիստների ուխտադրուժ պլանների, որոնք երազում էին ՍՍՌՄ պարտության և թուլացման մասին, Սովետական Միությունը և նրա Զինված Ուժերը պատերազմից ավելի ամրակուռ և հզոր դուրս եկան, իսկ իմպերիալիզմի հիմքերը ավելի թուլացան ու խարխլվեցին։ Այդ պատերազմում Սովետական Միության հաղթանակի շնորհիվ, մի շարք եվրոպական ու ասիական երկրներ ազատագրվեցին իմպերիալիզմի շղթաներից։ Այժմ այդ երկրները Սովետական Միության և Չինական Ժողովրդական Ռեսպուբլիկայի ղեկավարությամբ կազմել են սոցիալիզմի ու դեմոկրատիայի հզոր լագեր, որը միավորում է 900 միլիոն բնակչություն ունեցող 12 պետություն։ Եթե մինչև երկրորդ համաշխարհային պատերազմը սոցիալիստական սիստեմին ընկնում էր երկրագնդի տերիտորիայի 17 տոկոսը, բնակչության մոտ 9 տոկոսը և համաշխարհային արդյունաբերական արտադրանքի ընդամենը 7 տոկոսը, ապա ներկայումս սոցիալիստական լագերի երկրներին ընկնում են երկրագնդի տերիտորիա-

յի ավելի քան 25 տոկոսը, նրա ամբողջ բնակչության ավելի քան 35 տոկոսը, համաշխարհային արդյունաբերական արտադրանքի մոտ 30 տոկոսը։

Հայրենական Մեծ պատերազմում հաղթանակեցին Մեծ Հոկտեմբերի ծնունդ Սովետական պետական կարգը, Սովետական Զինված Ուժերը։ Պատերազմը նորից ու նորից հաստատեց մեր մեծ առաջնորդ Վլադիմիր Իլյիչ Լենինի մարգարեական խոսքերը. «Երբեք չեն հաղթի այն ժողովրդին,— ասում էր Վ. Ի. Լենինը,— որի մեջ բանվորներն ու գյուղացիներն իրենց մեծամասնությամբ իմացել, զգացել և տեսել են, որ իրենք պաշտպանում են իրենց, Սովետական իշխանությունը՝ աշխատավորների իշխանությունը, որ պաշտպանում են այն գործը, որի հաղթանակն իրենց և իրենց զավակների համար կապահովի կուլտուրայի բոլոր բարիքներից, մարդկային աշխատանքի բոլոր ստեղծագործություններից օգտվելու հնարավորությունը»[1]։

---

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 29, էջ 386։

ՀԱՅԿ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ՏՐԻ ՊԱՇՏԵՆՏԱԼ
ԳՐԱԴԱՐԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	Էջ
Ներածական	5
Առաջին գոտեմարտը	16
Մարտեր Կարատայակի համար	20
Գտախինյան բարձունքը	27
Նեվելյան օպերացիան	35
Պեչանե բնակավայրի դրավումը	42
Վիլիկայա գետի անցումը	44
Տարտուի ազատագրումը	48
Դեպի Ռիգա	52
Բեռլինի գրոհը	57

ՎԱՐԴԱՆ ԴԱԼՈՒՍՏԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Գվարդիայի գեներալ-մայոր
ՍԵՐԳԵՅ ԻՍԱՅԵՎԻՉ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԸ

Պատ. խմբագիր Վ. Վ. Ղազանչյան
Հրատ. խմբագիր Ռ. Խ. Մանոյան
Տեխ. խմբագիր Լ. Ա. Ազիզբեկյան
Վերստուգող սրբագրիչ Ա. Գ. Արզաքանյան

ՎՖ 07330 Հրատ. 1347 Պատվեր 370 ԽՀԽ 377 Տիրաժ 2000

Հանձնված է արտադրության 19/IX 1956 թ.։ Ստորագրված է տպագրության 29/XI 1956 թ.։ Հրատ. 2,7 մամուլ, տպագր. 4²/₃ մամուլ + 1 ներդիր, թուղթ 84×108¹/₃₂։
Գինը 80 կ.։

Հայկական ՍՍՌ ԳԱ Հրատարակչության տպարան, Երևան, Աբովյան, 124։

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
220032789

ԳԻՆԸ 80 կ. [084]

II
A 32789